

ՏԱՐ ՀՈՅՆԱՌ



ՏԵՂԵԿԱՏՈՒ-ՄՊԱՏԱՐԻ ՀԱՅՈՑ ԹԵՐԻ

ԺԳ-ՏԱՐԻ, ԹԻՒ 108, ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻ 2015



**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ՝
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ՎԵՀԱՎԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՀՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԺՄԱՆ 20-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ**



Կիրակի՝ յունիսի 28-ի առաւտեան, Նոր Զուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի նախագահութեամբ եւ Ծահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգը. Տ. Անահիա վլր. Գումանեանի ձեռամբ մատուցած կիրակնօրեայ Ս. եւ անմահ Պատարագի ընթացքում, Հայրապետական մաղթանք տեղի ունեցաւ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ արժանաւոր գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի ընտրութեան եւ օծման 20-ամեակի առթիւ:

Արարողութեանը ներկայ էին նաև թեմի հոգեւորականաց դասը եւ հոծ թւով ժողովուրդ:

Թեմակալ առաջնորդի նախագահութեամբ եւ հոգեւորականաց դասի մասնակցութեամբ եկեղեցու Ս. Խորանի վրայ տեղի ունեցաւ Հայրապետական մաղթանքը, որից յետոյ գերշ. Սրբազն Հայրն օրւան պատշաճ իր քարոզը տվեց ներկայ հաւատացեալներին:

Նա իր հայրական պատգամի սկզբնական բաժնում անդրադառնալով աւետարանական այն հատւածին, որտեղ Քրիստոսը խօսում է «Քաջ Հովհան»-ի մասին, ասաց. «Քրիստոսը խաչւեց՝ իր զաւակների մեղքերի թողութեան համար. Քրիստոսն իր փառքից խոնարհւեց՝ մարդկանց ճշմարտութեան եւ յաւիտենականութեան ճանապարհը ցոյց տալու համար. Մեր եկեղեցու բոլոր սուրբերն ու հայրեր Քրիստոսի օրինակով իրենց անձերը նւիրեցին՝ լիներով հայ ժողովրդի քաջ ու բարի հովիւները»:

Այնուհետեւ թեմակալ առաջնորդն անդրադառնալով նաև անցնող 20 տարիների ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի նիրեալ ծառայութեանը՝ մասնաւորապէս շեշտեց այն բեղուն գործունեութիւնը, որը Վեհափառ իրագործել է Հայաստանեաց առաքելական սուրբ եկեղեցին միջազգային զանազան ատեաների ուշադրութեան կենտրոնը դարձնելու, Հայ դասի արդար լուծման, Անթիլիաս-Էջմիածին յարաբերութիւններն օրսուորէ ամրապնդելու եւ հայրենիքին օրյավիճ հանդիսանալու ուղղութեամբ:

Սրբազն Հայրն իր պատգամի աւարտին ներկաներին հրահրեց աղօթք բարձրացնել առ Աստւած՝ Արամ Ա Վեհափառ Հայրապետին աստվածահանոյ ծառայութիւն ու երկար կեանք պարգևելու եւ Հայաստանեաց առաքելական սուրբ եկեղեցին ու հայ ժողովրդին անսասան պահելու համար:

Սոյն արարողութեան երգեցողութիւնը կատարւեց Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախմբի միջոցով՝ Արմէն Ամիրիխանեանի ղեկավարութեամբ:



**ԳՆԱՀԱՏԱՆՅԻ ԵՐԵԿՈՅ՝ Ի ՊԱՏԻՒ ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԿՐՈՒՆԱԿԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՃՐՋԱՆԱՒԱՐԸ ԵՆԹԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ**



Սպահանի հայոց թեմի Թեմական Եւ Կրօնական խորհուրդների համատեղ նախաձեռնութեամբ, թւականիս մայիսի 2-ի երեկոյեան, Ս. Ամենափրկչեան Վաճռում տեղի ունեցաւ երկու խորհուրդների շրջանաւարտ ենթամարմինների գնահատանքի երեկոն, որին հրավիրած էին նաև Ազգային առաջնորդարանի վարչական բաժնի պատունեանքը: Ներկայ էր նաև Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգչ. Տ. Անանիա Վրդ. Գումանեանը:

Բացման խօսքով հանդէս եկաւ Թեմական խորհուրդի անդամ տկն. Քառոլին Դիլանչեանը, որի ողջոյնի եւ բարի գալստեան խօսքերից յետոյ, երկամեայ գործունեութեան վերաբերեալ ամփոփ գեկոյցներով հանդէս եկան Թեմական Եւ Կրօնական խորհուրդների աստենապետը՝ պրնք. Նոէլ Մինասեանը եւ Արշալոյս Խուրավերդեանը:

Այնուհետեւ հոգչ. Տ. Անանիա Վրդ. Գումանեանի եւ պրնք. Նոէլ Մինասեանի ու Արշալոյս Խուրավերդեանի ձեռամբ, ենթակայ մարմինների անդամներին յանձնեցին Թեմական Եւ Կրօնական խորհուրդների կողմից պատրաստած շնորհակալագրերը՝ ի գնահատանք նրանց կատարած անշահիսնդիր աշխատանքի եւ ստանձնած պատասխանատութեան լաւագոյն իրագործման:

Պաշտօնական բաժնի վերջաւորութեանը, գնահատանքի խօսքով հանդէս եկաւ հոգչ. Հայր Սուրբը, ով ներկա ներին փոխանցեց նաև թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբկէն արք. Զարեանի օրինութեան եւ ողջոյնի խօսքերը:

Ծրագրի աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:




**Ի.Ի.Հ.-Ի ՍՊՈՐՏԻ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ԴԿՏՐ. ՄԱԿՄՈՒԴ ԳՈՒԴԱՌԻ ԱՅՅԼ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔ**

Թւականիս մայիսի 2-ի առաւօտեան Ս. Ամենափրկչեան վաճռ այցելեցին Իրամի խլամական հանրապետութեան Սպորտի եւ երիտասարդութեան հարցերի նախարար դկտր. Մահմուդ Գուդառզին եւ նրան ընկերակցող Սպահանի Սպորտի եւ երիտասարդութեան հարցերի գրասենեակի գլխաւոր տնօրին Սոլթան-Հոսէնին: Ս. Ամենափրկչեան վաճռում հիւրերին դիմաւորեցին Սպահանի հայոց թեմի Թեմական խորհուրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանը եւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան կենտրոնական վարչութեան անդամ տկն. Այլին Մելիքեանը:

Պատուիրակութեան անդամները Ս.Ա. Վաճքի «Ա.

Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի եւ «Խաչատուր Կեսարացի»-ի անդամ թանգարան այցելելուց յետոյ, հիւրենկալեցին Ծաղկեայ դահլիճնում:

Հանդիպման ընթացքում Թեմիս Թեմական խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանը ընդգծեց իրանահայութեան ուշագրաւ ներդրումը, ինչպէս նաև Իրանում գործող հայկական մարզա-մշակութային միութիւնների, ի մասնաւորի Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան եւ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.-ի կարեւոր դերակատարութիւնը՝ Իրանի մարզական ոլորտի զարգացման գործում, յիշելով այս ասպարեզում մեծ աւանդ թողած հայորդիների անուններ:



Նա յայտնեց, որ այս միութիւններում դաստիարակւած եւ իրենց մարզական հմտութիւնները կատարելագործած բազմաթիւ հայ երիտասարդներ, իրենց մարզական բարձր ունակութեան շնորհի ընդգրկել են Իրանի ազգային եւ տարբեր հաւաքականներում,

բարձր պահելով հայ մարզիկի համբաւն ու անունը:

Պրն. Նոէլ Մինասեանն իր խօսքերի շարունակութեան մէջ անդրադառնալով համահայկական նշանակութեամբ մարզական միջոցառումների կազմակերպմանը, տեղեկացրեց յառաջիկայ օգոստոս ամսում Հայաստանում կայանալիք համահայկական մարզական խաղերի վերաբերեալ եւ շեշտեց իրանահայ մարզիկների մեծաթիւ եւ բարձր մակարդակով ներկայութիւն ունենալու անհրաժեշտութիւնը:

Այնուհետեւ խօսքը փոխանցւեց դկուր. Մահմուդ Գուլազիին, ով իր արտայայտութիւններում գնահատելով իրանահայ մարզիկներին՝ Իրանի մարզական կենարում նրանց կարեւոր դերակատարութեան համար, խոստացաւ կարեաց սահմաններում նեցուկ հանդիսանալ նրանց, միաժամանակ խոստացաւ նախարարութեան հնարաւորութեան շրջագծում ապահովել Հայաստանի համահայկական խաղերին իրանահայ մարզական պատկիրակութեան պատւաւոր ներկայութիւնը:

Հանդիպման աւարտին հնչեցին երկուստեք բարեմաղթանքի խօսքեր, իսկ յանուն Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի յարգելի նախարարին նվիրւեց Ս.Ա. Վանքի պատկերով Սպահանի ձեռարթեստի յուշանւեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՓԻՇՆԻԿ» ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՍՎՐԱԿԱՎՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵՎՆ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՀԱՒԱՔ-ԲԱԿԱՎՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՎՐԱՎՆՈՒՄ

Կիրակի՝ 2015 թւականի մայիսի 10-ին, Ս. Ամենափրկչեան վաճքացելեց Հայաստանի հաշմանդամների «ՓիՇՆԻԿ» միութիւն հասարակական կազմակերպութեան բասկետբոլի հաւաքականը: Խումբը մայիսի 10-ից 15-ը եղաւ Սպահանում մասնակցելու Սպահանի քոյր քաղաքների հաշմանդամների մարզահմբերի մասնակցութեամբ կազմակերպած միջազգային առաջնութեան մարզական մրցումներին: Սոյն մարզական մրցութիւններին մասնակցելու յայտ էին ներկայացրել 14 քոյր քաղաքներից՝ 13-ը:



«Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի եւ «Խաչատուր Կեսարացի»-ի անան թանգարան այցելելուց յետով, խումբը հիմքնելավեց Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի միջոցով: Հանդիպմանը ներկայացաւ նաև թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, ով յաջողութիւն եւ վերելք մաղթեց հաւաքականի բոլոր անդամներին, կարեւորելով Իրան-Հայաստան բարիդրացիական փոխյարաբերութիւնները, որի գարգացմանը նպաստելու է նաև մարզական միջոցառումներին եւ փառատօններին կողմերի մարզական խմբերի մասնակցութիւնը:

Թեմական խորհրդի փոխատենապես պրն. Վարուժ Մովսիսեանը հակիրճ կերպով նիկրերին ներկայացրեց Թեմի ընդհանուր դրամքը, իսկ խմբի ղեկավար արքն. Յակոբ Աբրահամեանը համառօտ բացարձակ հաւաքականի հիմնադրման եւ աշխատանքների մասին: Նա նշեց, որ

թեւե Ծերկայ պայմաններում մեծ դժւարութիւններ է դիմակալում հաւաքականը, սակայն յոյս յայտնեց, որ յառաջիկացում աւելի է կարեւոր-ելու մարզական ոլորտը՝ Հայաստանի Հանրապետութիւնում:



Թեմական խորհրդի ատենապետ պր. Նոէլ Մինասեանը, ողջունելով մարզիկների Ծերկայութիւնը, լուսաբանութիւններ տվեց հայու-

թեան եւ հայկական մշակութային ժառանգութեան նկատմամբ Իրանի իշխանութեան բարեացակամ մօտեցումների եւ օժանդակութիւնների մասին:



Վերջում, գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի եւ պր. Նոէլ Մինասեանի ձեռամբ յուշանէրներ փոխանցուեցին հաւաքականի անդամներին:

ՏԵՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԸ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔՈՒՄ



Երկուշաբթի՝ 2015 թւականի մայիսի 11-ի կէսօրին, Ս. Ամենափրկչեան վաճք այցելեցին եւ Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի եւ Թեմական խորհրդի ատենապետ պր. Նոէլ Մինասեանի հետ տեսակցութիւն ունեցան Հայաստանի Հանրապետութիւնից ժամանած մի խումբ տնտեսագէտ-գործարարներ, ովքեր Իրանի տնտեսական ոլորտում աշխատանք ծառալելու եւ պայմանագրեր կնքելու միտումով ժամանել էին Իրանի Խալ. Հանրապետութիւն:

Պատիրակութեանն ընկերակցում էր Իրանում Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան տնտեսական խորհրդական Արթուր Ցովսէփեանը:

Գերշ. Արբազան Հայրը ողջունեց մասնագէտների նախաձեռնութիւնը եւ յաջողութիւն մաղթեց Երանց՝ իրենց գործունեութեան մէջ, միաժամանակ շեշտելով, որ Իրան-Հայաստան երկկողմ յարաբերութիւնների զարգացումն ու խորացումը մեծապէս նպաստելու է յանկապէս Հայաստանի Հանրապետութեան տնտեսական եւ քաղաքական առաւել կայունութեանն ու վերելքին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 97-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱԴՐՈ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ



Ժողովրդական տօնախմբութեամբ, հինգշաբթի՝ մայիսի 28-ի երեկոյեան, Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան շրջափակում, հանդիսաւոր կերպով նշեց Հայաստանի առաջին Հանրապետութեան 97-ամեակը: Ազգային տօն, որը պսակեց Սարդարապատի, Ղարաբիլսայի ու Բաշ-Ապարանի ճակատամարտերի յաղթանակներով եւ հայ ժողովրդի սխարգործութիւններով:



Ակզեռում այս պանծալի տօնի կապակցութեամբ շնորհաւորանքներով հանդէս եկաւ երեկոյի հանդիսավար Սոսէ Պողոսեանը, ով իր արտայայտութիւնների շրջագծում կարեւորելով Սփիտքի առանձնակիորէն վերաբերմունքը ազգային տօների հանդէպ, որը հայրենի երկրի թիկունքին յաղթ քալելու համար՝ առաւել ամուր եւ պողպատէ սերունդ կերտելու խթան է համարում, մայիսեան այս յաղթանակը համարեց հազարամեայ պատմութեան մատեանի հին եւ նորագոյն դրագ-ները միացնող կամուրջը:

Հանդիսավարի խօսքին յաջորդեց դրօշակի արարողութիւնը, որտեղ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Սկաուտական միաւորի անդամների միջոցով բե-

մի երկու կողմերում ծածանեցին Իրանի Խալ. ու Հայաստանի հանրապետութիւնների դրօշները, ապա հնչեցին նոյն Հանրապետութիւնների հիմները՝ Երևայ ժողովրդի յոտնկալ ունկնդրութեամբ:

Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բաբգէն արք. Զարեանի նախագահութեամբ եւ թեմի հոգեւորականաց դասի մասնակցութեամբ իրականացեց Հանրապետական մալյանք, որին իր երգեցողութեամբ մասնակից դարձաւ նաև Ս. Ամենափրկչեան վաճրի «Կոմիտաս» երգախումբը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի:



Այնուեւու տեղի ունեցաւ ամենամեայ շքերթ-սովորութեամբ թեմի ազգային մարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի, հայոց ազգային դպրոցների աշակերտութեան ու անձնակազմի եւ համայնքի միութիւնների:

Ցաջորդի Հայաստանի Հանրապետութեան հիմնադրման 97-ամեակի տօնակատարութեան Նոր Զուղայի յանձնախմբի խօսքն ընթերցւեց Մարգարիտ Դաթեանի միջոցով:

Ահա մի հատուածի մէջբերում սոյն խօսքից.

«Անկախ Հանրապետութեան հիմնադրութեամբ, հայ ժողովուրդը ամենասուղ ու սահմանափակ հնարաւորութիւններով իրականացրեց իր ազգային պատագրական պայքարի գաղափարական դրոյթները,



կերտեց ազատ, արդար ու ժողովրդավարական կարգերով օժտւած երկիր: Պետական, քաղաքական, հասարակական, մշակութային ու կրթական բնագաւառներում նրա տիպար անհատականութիւններն ու գործիչներն իրենց նւիրումով ու ծառայութեամբ ուղենիշ են հանդիսանում նաև այօր՝ հայ սերունդների համար եւ գաղափարական այդ մեկնակէտով էլ Հայաստանի անկախ Հանրապետութիւնն ամրապնդելու, պետականութիւնը հզօրացնելու, նրա զարգացումն ու յառաջադիմութիւնը եւ ժողովրդի բարօրութիւնն ապահովելու կարեւոր նպատակն ենք հետապնդում ազգովի»:



Ծրագրի պաշտօնական բաժնի շարունակութեան մէջ նինելիա Աբրահամեանի միջոցով ընթերցւեց

«Որովէն» երիտասարդական միութեան խօսքը, ուր կարեւորութեամբ ասւած էր. «**Զմռուանանք պատմական անբեկանեի այն իրողութիւնը, որ վաղւայ օր ունենալու համար երէկւայ յիշողութիւն է պէտք, իսկ պատմութիւն ունեցող ժողովրդի դէպքում՝ պատմական յիշողութիւն։ Մեր ժողովրդի պատմական յիշողութեան անբաժան եւ կարեւորագոյն մի հատւածն է կազմում Մայիս 28-ը եւ Հայաստանի առաջին Հանրապետութեան փառահեղ պատմութիւնը։ Պատմութիւն, որը հանդիսանում է մեր վաղւայ օրւայ ուղեցոյցը։ Պատմութիւն, որի սերմանած գաղափարներն ու ողին հանդիսանում են այն վէմն ու կուտանը, որոնք կարող են ազգն ու հայրենիքը պահպանել այլասերման, դիմազրկման եւ ուժացման ազգակործան վտանգից»։**



Այնուհետեւ օրւայ առթիւ բանախօսեց Սոնիկ Բաղդումեանը, ով իր ելոյթի առաջին բաժնում անդրադառնալով Մայիս 28-ի ռազմագիտական արժեքին, շեշտեց, որ նման պատերազմներում փոքր ուժերի յաղթանակը պայմանաւորւած է ռազմավարական մեծ հմտութեամբ եւ հնարամտութեամբ, աւելի մեծ զոհողութիւնների գնալու եւ աւելի ծանր պայմաններում դիմադրելու պատրաստականութեամբ, ներքին դինամիկայի եւ կենտրոնական առկայութեամբ։ Նա աւելացրեց նաև. «Հայութեան դիւցազնական եւ ասպետական ոգու իրական դրսւերումները կատարւել են ամենազժւարին ու ամենաանհնարին պայմաններում։ Կարծէք մենք դժւար ժամանակների մարդիկ լինենք, կամ աւելի ճիշտ մենք դժւար ժամանակներում մեր հոգու պահոցներից հանում ենք մեր իրական որակները, ու աւելին՝ կարողանում ենք համախմբւել ու միասնական գործել։ Այսինքն միախառնել, միաձուլել այդ որակները, արժանիքները, կարողութիւնները, իմացութիւնը, իմաստութիւնը, եւ այդ ամէնը տալ յանուն նպատակի։ Դրա համար էլ այդ գործունէութեան արդիւնքում կերտւածը, արարւածը կոչւում է հրաշք, անկարելի, սիրանք։ Նայէք Վարդանանքին, ռազմական

պարտութիւն, բայց եւ ոչ մի զիջում գերազոյն նպատակից: Նայէք 20-րդ դարավերջի մեր մեծագոյն յաղթանակին՝ Շուշիի ազատագրմանը՝ սիրանքի ու անկարելիի մի այլ օրինաչափ»:



Տկն. Բաղրումեանն իր բովանդակալից խօսքի շարունակութեան մէջ անդրադառնալով նաև Հայաստանի առաջին Հանրապետութեան քաղաքական եւ իրաւական նշանակութեանը՝ կատարեց հետեւեալ դիտարկումները.

Առաջին՝ Հայաստանի Հանրապետութիւնը մեր ազգին սոսկ պատմական ազգ լինելուց փոխակերպեց արդի ընկալմամբ միջազգային ընտանիքի անդամ ազգի, որն ունի իրաւական վկայական, վկայաթուղթ, ինչը նրան հնարաւորութիւն է տուլ լինել հայ ազգի իրաւատէրն ու իրաւապաշտպանը:

Երկրորդ՝ հայութիւնը հարիւրամեակներ շարունակ պետականութեան բացակայութիւնից յետոյ, մեծ ոստին կատարելով, ճեղքեց իրեն շրջապատող բոնատիրական ու յետադիմական վարչակարգերի տիրական ձեւերը եւ հաստատեց ոչ աւել, ոչ պակաս հանրապետութիւն՝ այն էլ դրա ամենաժողովրդավար ու առաջադիմական տարբերակով՝ խորհրդարանական հանրապետութիւն:



Տօնակատարութեան պաշտօնական բաժինն աւարտւեց թեմակալ առաջնորդ Տ. Բարգէն արք. Զարեանի հայրական պատգամով: Սրբազն Հայրը շնորհաւորելով Հայաստանի առաջին Հանրապետութեան հիմնադրման տօնի կապակցութեամբ եւ յիշելով Սարդարապատի, Ղարաքիլիսայի ու Բաշ-Ապարանի ճա-

կատամարտերն ու այնուեղ իրենց սիրուագործութեամբ յաղթանակ կերտած քաջարի հայրութիւներին, աւելացրեց. «Ճիշտ է, կարճատեւ էր առաջին Հանրապետութեան կեանքը, սակայն այն ազատատենչ ոգին, որը ստեղծւեց եւ յաջորդ սերունդներին ներշնչեց մեր հերոսների միջոցով, մնաց ու մեր ժողովուրդն այդ ոգով շարունակեց իր պայքարը Հարաբեղում եւ այլուր իր ինքնութիւնը պահելու եւ իր անկախութիւնն ստեղծելու համար եւ կարողացաւ դարձեալ ունենալ անկախ հայրենիք: Սակայն բաւական չէ միայն անկախութեան կերտումը: Պէտք է անկախութիւնը պահել ու պահպանել եւ սա մեր զեկավարութեան ու ողջ ժողովրդի պարտականութիւնն է: Այսօր ունենք անկախ հանրապետութիւն, բայց սա բաւարար չէ եւ պէտք է շարունակել մեր պահանջատիրական պայքարը, քանի դեռ մեզանից խլած են մեր հողերն ու իրաւունքները»: Թեմակալ առաջնորդը վերջում յորդորեց պահպանել հայրենիքը, լեզուն, մշակոյթը, արժեքներն ու սրբութիւնները՝ հայրենի հողի վրայ ապրելով, հայրենիքը շենացնելով եւ երկրի պետականութիւնն ու տնտեսութիւնը հզօրացնելով:



Ծրագրի երկրորդ բաժնում, գեղարեսատական կատարումներով յագեցած ծրագրով առաւել բարձրացաւ ներկաների տօնական տրամադրութիւնն ու խանդավառութիւնը: Սոյն բաժնում ազգային-հայրենասիրական երգերի կատարմամբ հանդէս եկաւ Հայաստանից ժամանած վաստակաւոր երգչուի Լէլլա Սարիբեգեանը: Գեղարեսատական ծրագրի ընթացքում պարապին եւ ազգային-յեղափոխական երգերի կատարումներով հանդէս եկան նաև Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի «Կուռեն» պարախմբի եւ Էստրադային խմբի անդամութիւներն ու Ս. Ամենափրկչեան վաճրի «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի մեներգիչները: Երգերի կատարողներն էին՝ Զարենուշ Աղոյրեանը, Անասիկ Յովսէփեանը, Վանա Շիրանեանը, Շաքէ Մովսիսեանը եւ Թահիա Մինասեանը:

Տօնախմբութիւնն աւարտւեց աւանդական հրավառութեամբ:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԻՒՆ

20 յունիսի 2015

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Կենտրոնական յանձնախմբի կողմից Նոր Զուղա հրամիւրած «Փրկութեան քարտէզ» ֆիլմի հեղինակ եւ պրոդիւսեր Մանուէլ Սարիբէկեանը, եւ ստուդիոյի արտաքին կապերի պատասխանատու, իրանագէտ Ժաննա Յակոբշանեանը այցելեցին Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանին:



Հանդիպմանը ներկայ էին Թեմի Կրօնական խորհրդի աստենայետ պրն. Վարուժ Մովսիսեանը, խորհրդի անդամ պրն. Սաքո Տէր Յովհաննիսեանը եւ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Կենտրոնական յանձնախմբի անդամ տկն. Արմիճէ Սիմոնեանը:

Թեմակալ առաջնորդը ողջունելով հիւրերի ներկայութիւնը, բարձր գնահատեց նրանց կատարած աշխատանքը, լուրջ ձեռքբերում համարելով այն:

21 յունիսի 2015

Աշակերտական ճամբարին մասնակցելու նպատակով Նոր Զուղայում գտնող Թեմականի եօթ հայկական



դպրոցների տարրական բաժնի աշակերտները, կիրակի օրը ներկայ գտնւեցին Ս. Աստվածածին եկեղեցում

մատուցուղ սուրբ եւ անմահ Պատարագի արարողութեանը, որից յետոյ մասնակցեցին եկեղեցու սրահում կազմակերպած հիւրամիւրութեանը: Ընդունելութեան ընթացքում աշակերտները հանդէս եկան երգերով ու ասմունքներով եւ արժանացան ներկաների գնահատանքին:



Թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանն իր օրինութիւնը տևեց աշակերտներին՝ յորդորելով նրանց իրենց ուսումը շարունակել նոյն յանձնառութեամբ եւ շանադրութեամբ:

Թեմականի աշակերտների խումբը սուրբ եւ անմահ Պատարագի արարողութիւնից յետոյ ներկայացաւ Ս. Ամենափրկչեան վանք, այցելեց «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի եւ «Խաչատուր Կեսարացի»-ի անանթանգարան: Խումբը վանքի շրջափակում գտնուղ նահատակաց յուշարձանի առջեւ աղօթքով, ոգեկոչող երգերով եւ ծաղիկների մատուցմամբ իր յարգանքի տուրքք մատուցեց Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին:

24 յունիսի 2015

Խալամական մշակոյթի եւ առաջնորդութեան Սպահանի գրասենեակի նախաձեռնութեամբ, չորեքշաբթի՝ յունիսի 24-ին, Ս. Ամենափրկչեան վանք այցելեցին Շիյցարիայի Ցիտուխ քաղաքի համալսարանի պատմութեան եւ կրօնական դասընթացներին հետեւող աւելի քան 35 ուսանող-ուիիներ, իրենց դասախոս պրոֆեսորի ընկերակցութեամբ:



Վանքի եկեղեցի եւ թանգարան այցելուց յետոյ,

խումբը հանդիպում ունեցաւ թեմակալ առաջնորդ գերշ. S. Բարգէն արք. Զարեանի հետ: Առաջնորդ Սրբազն Հայոց ուրախութիւն յայտնելով համալսարանական ուսանողների ցուցաբերած հետաքրքրութեան եւ այցելութեան կապակցութեամբ, համապարփակ տեղեկութիւն փոխանցեց իրանահայութեան, մասնաւորաբար Սպահանի հայոց թեմի կապակցութեամբ: Նա մատնանշելով Իրանում ապրող հայ համայնքի իրաւունքներն ու հնարաւորութիւնները, այդ ուղղութեամբ կարեւոր համարեց համալսարանական ուսանողութեան տեղեկացաւածութիւնը, ինչը նպաստելու է կացութեան արդար գնահատմանը եւ իրավիճակի ճշգրիտ արտացոլմանը:



Թեմակալ առաջնորդն սպառիչ պատասխաններ տվեց ուսանողների եւ նրանց դասախոսի կողմից ուղղած բոլոր հարցումներին:

25 յունիսի 2015

Իրանի եւ Հայաստանի Հանրապետութիւնների միշտ տնտեսական կապերի զարգացման եւ համատեղ



ձեռնարկութիւններ մշակելու նպատակով Իրան այցելած Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի Տնտեսական հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ արք. Վարդան Սուրենի Այլազեանը՝ իրեն ընկերակցող պատիրակութեան հետ ներկայացաւ Ս.

Ամենափրկչան վաճր:

Խումբն այցելեց «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի եւ «Խաչատուր Կեսարացի»-ի անան թանգարան: Պրճ. Այլազեանն իր հիացմունքը յայտնեց նման հաստատութիւնների գոյութեան եւ նրանց պահպանման համար հայ համայնքի ու ազգային իշխանութեան աշխատանքների կապակցութեամբ:

Պատիրակութիւնը Ս. Ամենափրկչան վաճրի Ծաղկեայ դահլիճնում ներկայացաւ թեմակալ առաջնորդ գերշ. S. Բարգէն արք. Զարեանին: Հանդիպմանը ներկա էին Սպահանի հայոց թեմի Պատգամատրական ժողովի դիմանի ատենապետ պրճ. Վարուժ Մինասեանը, Թեմական խորհրդի ատենապետ պրճ. Վրեժ Տէր-Մարտիրոսեանը եւ Կրօնական խորհրդի ատենապետ պրճ. Վարուժ Մովսիսեանը:



Թեմակալ առաջնորդը ողջունեց հայրենքից ժամանած հիւրերին, նշելով, որ Իրան-Հայաստան բազմակողմանի յարաբերութիւնների զարգացումը նպաստելու է Հայաստանի Հանրապետութեան կայունութեանը, որը միաժամանակ իր դրական անդրադարձն է ունենալու տարածաշրջանի կացութեան վրայ: Առաջնորդ Սրբազն Հայոց մատնանշելով Իրանի Խալ. Հանրապետութեան բարեացակամ եւ շինչի մօտեցումը հայութեանը վերաբերող հարցերի եւ մշակութային ժառագութեան պահպանման նկատմամբ, շեշտեց, որ հակառակ Հայաստանը շրջապատող որոշ երկրների ոչ-բարեացակամ մօտեցումներին, Իրանը միշտ զօրավիգ է կանգնել Հայաստանին:

Պրճ. Այլազեանը Իրան-Հայաստան յարաբերութիւնները դրական գնահատելով նշեց, որ դեռևս մեծ հնարաւորութիւններ եւ միջոցներ կան երկուստեք կապերն առաւել ամրացնելու եւ զարգացնելու գծով, որի համար դրական են տրամադրուած նաև Իրանի պատասխանատու մարմինները: Պրճ. Այլազեանը շեշտեց, որ Իրան-Հայաստան կապերի ամրապնդմանն ու զարգացմանը մեծապէս նպաստել է Իրանում ապրող հայ համայնքը, որը տակաւին մեծ անելիքներ ունի այդ ուղղութեամբ: Նա կոչ ուղղեց իրանահայ համայնքին նոյն նախանձախնդրութեամբ շարունակել իր բարի առաքելութիւնը:

Վերջում ազգային իշխանութեան կողմից յուշանւէր յանձնեց պրճ. Վարդան Այլազեանին:

**ՍՈՒՐԲ ԵՒ ՎԵՆՋՎ ՊՎՏՎՐՎԴԻ
ՀՎՍՋԲՎՐՋՄԸ ՑՈՆԻ ՎՐԹԻՒ**

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Համբարձման տօնի առթիւ, հինգշաբթի՝ մայիսի 14-ի առաւոտեան ժամը 10-ին, Փերիոյ գալաքի Ղարդուն գիտի Ս. Նշան Եկեղեցում Ս. Եւ անմահ Պատարագ մատուցեց՝ նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի Եւ ձեռամբ հոգչ. Տ. Արտակ աղք. Արարեանի: Պատարագին մասնակցում էին արժն. Տ. Մեսրոպ աւ. քինց. Գալըստանեանը, արժն. Տ. Խաչատուր քինց. Զարգարեանը Եւ դպրաց դասը: Երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախմբի միջոցով:



Արարողութեանը ներկայ էին թեմի ազգային մարմինների ներկայացուցիչները, գիտի հայ բնակչութիւնը Եւ Համբարձման տօնի առթիւ Սպահանից ու Շամինշահրից Փերիոյ գալաք ժամանած ժողովուրդ:

Ս. Պատարագի ընթացքում թեմակալ առաջնորդ Սրբազն Հայրն օրուայ առնչութեամբ իր քարոզում անդրադառնալով Համբարձման տօնի իմաստին՝ ասաց. «Քրիստոսը երկինք բարձրացաւ, որպէսզի մարդը Սուրբ Հոգուն դիմաւորի Եւ Աստծու կամքի համաձայն Սուրբ Հոգով զօրացած իր կեանքն ապրի ու քայլի այն ճանապարհով, որով քայլեց Քրիստոսը: Ճանապարհ, որը բարութեան, փրկութեան, արդարութեան Եւ դէպի յաւիտենական ուրախութիւն ու երջանկութիւն առաջնորդող ուղի է»:

Ապա Սրբազն Հայրը ողջունելով հաւատացեալների ներկայութիւնը Ղարդուն գիտի Ս. Նշան Եկեղեցում՝ կարեւորութեամբ ընդգրծեց, որ Եկեղեցիները զօրանում Եւ կեանքով են լցուում ժողովորդի ներկայութեամբ ու աղօթքներով: Նա վերջում յատուկ գնահատանքի խօսք ուղղեց հոգեւորականաց դասին՝ օրուայ Պատարագի մատուցման Եւ Ս. Նշան Եկեղեցու վարչութեանը՝ Եկեղեցին պայծառ Եւ բարեգարդ վիճակում պահելու կապակցութեամբ:

Հոգեպարար արարողութեան աւարտին ներկայ հաւատացեալները Ս. Հաղորդութիւն ստացան պատարագի Հայր Սուրբի ձեռամբ, ապա աւանդոյթի համաձայն Համբարձման տօնը նշեցին բնութեան գրկում՝ վայելելով պայծառ օրը Եւ կանաչազարդ բնութիւնը:

Յատկանշական է, որ Համբարձման տօնի առթիւ Ս. Եւ անմահ

Պատարագ մատուցեց նաև նոր Զուղայի Ս. Մինաս Եկեղեցում՝ արժն. Տ. Վարդան քինց. Աղաբաբյանի միջոցով:

Ս. ՀՈՒՖՄԻՄԵՎՆՑ ԿՈՅՍԵՐԻ ՑՈՆԸ

ՆՈՐ ԶՈՒՂՅՅԻ Ս. ԿՈՒԽԱՎՆՎՅ

ՎԱՆՔՈՒՄ

Երկուշաբթի՝ 2015 թւականի յունիսի 1-ին, նոր Զուղայի Կուսանաց վանքի Եկեղեցում մատուցեց Ս. Եւ անմահ Պատարագ, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի: Օրուայ պատարագին էր հոգչ. Տ. Արտակ աղք. Արարեանը: Արարողութեանը մասնակցում էին նաև թեմի հոգեւորականաց Եւ դպրաց դասերը:

Տօնի առիթով իր պատգամը փոխանցեց թեմի բարեշան առաջնորդ Սրբազն Հայրը՝ խօսելով Հոփամիմեանց կոյսերի հաւատի, նիդրումի Եւ յատկապէս նահատակութեան մասին: Նա թելադրեց, որ սուրբերի կեանքի օրինակը ներշնչման աղբիր հանդիսանայ իրաքանչիւր հաւատացեալի համար Եւ այդ հաւատով զինաւած՝ մեզանից իրաքանչիւրն ապրի իր աստιածահանց Եւ քրիստոնէավայել կեանքը: Առաջնորդ Սրբազն Հայրն իր խօսքի մէջ անդրադարձաւ նաև այն կոյսերին, ովքեր ապրել են Ս. Կուսանաց վանքում Եւ իրենց կեանքն են ընծայաբերել: Նա անդրադարձաւ նաև Հայութեաց բարեգործական ընկերութեան նշեցեալ անդամութիւնների հոգիների խաղաղութեան համար:

Յաւարտ Ս. Եւ անմահ Պատարագի, առաջնորդ Սրբազն Հօր նախագահութեամբ Հոգեհանգստեան արարողութիւն կատարեց՝ Կուսանաց վանքում ապրած ննշեցեալ կոյսերի Եւ Հայութեաց բարեգործական ընկերութեան նշեցեալ անդամութիւնների հոգիների խաղաղութեան համար:

Արարողութիւնից յետոյ, Հայութեաց բարեգործական ընկերութեան կողմից հիւրասիրութիւն կատարեց Եւ ներկայացեց գեղարւեստական կոկի յայտագիր:

ՏՕՆ՝ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐՉԻ ԵԼՔԸ ՎԻՐԱՌՈՒՅՆ

Չափաթ՝ 2015 թւականի յունիսի 6-ը համընկնում էր Ս. Գրիգոր Լուսատորիչ բազմաշարշար հայրապետի վիրապից դուրս բերելու տօնին: Առ այդ Կիրակի՝ յունիսի 7-ին, Նոր Զուղայի «Ս. Գրիգոր Լուսատորիչ» եկեղեցում, որի անանակշուրթեան տօնն էր միաժամանակ, տեղի ունեցած սուրբ եւ անմահ Պատարագ՝ նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի:



Պատարագիչն էր Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգք. Տ. Անանիա վրդ. Գումանեանը: Արարողութեանը ներկայ էին հոգեւորականաց ու դպրաց դասերը եւ համայնքի հայատաւոր ժողովուրդը:



Ցընթացս սուրբ Պատարագի, յաւուր պատշաճի քառորդեց առաջնորդ Սրբազն Հայրը՝ խօսելով մեր եկեղեցու սուրբ Հայրերի եւ առանձնապէս Ս. Գրիգոր Հայրապետի կրած բազում չարչարանքների եւ յանձն առած զոհողութիւնների մասին, որով լուսատորւեց, պայծառացաւ եւ առաւել հաստատուն դարձաւ Հայաստանաց առաքելական սուրբ եկեղեցին: Առաջնորդ Սրբազն հայրը ներկայացրեց Ս. Գրիգոր Լուսատորիչ դրական ազդեցութիւնները Հայ եկեղեցու եւ հայ ժողովոդի հոգեւոր վերազարթօնքի մէջ եւ յորդորեց բոլորին՝ զօրանալ նոյն հայատով եւ օրինակ վերցնել մեր եկեղեցու սուրբերի կեանքից՝ յահիսենական կեանքին:

արժանի դառնալու համար:



Վերջում թեմակալ առաջնորդը, տօնի առիթով, ողջոնի եւ շնորհաւորանքի խօսք ուղղեց եկեղեցու հովվին, եկեղեցեաց վարչութեանը, դպրութեանը, սպասաւորներին, եկեղեցու տիկնանց յանձնախմբին եւ բոլոր հայատացեալներին:



Ս. Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազն Հօր նախագահութեամբ հոգեւորականաց եւ դպրաց դասերը թափօր կազմելով հայոց առաջին հայրապետ Ս. Գրիգոր Լուսատորիչ աշ-մասունքը շրջեցրին եկեղեցու շրջափակում եւ կրկին Ս. Խորան բարձրացան, որտեղ Առաջնորդ Սրբազն Հօր ձեռամբ եւ Լուսատորիչ աջով Զօրօրինելքի արարողութիւն կատարւեց: Օրինած ջուրը բաժանեց հայատացեալ ներկաներին, ովքեր այն ընդունեցին խորը հայատով ու այն համոզումով, որ դա լինելու է դժւարութիւնների փարաւում, ցաւերի ու հիւանդութիւնների բժշկում եւ աստւածային օրինութիւն:

Ս. Պատարագից յետոյ, եկեղեցու սրահում տեղի ունեցաւ հիւասիրութիւն եւ ներկայացւեց գեղարւեստական յայտագիր:

ՏՕՆ՝ Ս. ՆԵՐՍԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԻՍԱՍԱՐԿԱԴՊՐԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏԻՉՈՒԹԻՒՆ

Կիրակի՝ 2015 թւականի յունիսի 14-ին, Ս. Ներսէս Մեծ Հայրապետի տօնին, Նոր Զուղայի համանուն եկեղեցում, որի անանակոչութեան տօնն էր, մատուցեց սուրբ եւ անմահ Պատարագ՝ նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի:



Պատարագիչն էր արքմ. Տ. Վարդան քինչ. Աղարաբավեանը: Արարողութեանը ներկայ էին հոգեւորականաց ու դպրաց դասերը եւ հաւատացեալ հայորդիներ:



Սուրբ եւ անմահ Պատարագի այս արարողութեան ընթացքում տեղի ունեցաւ նաև դպրութեան եւ կիսասարկաւագութեան ձեռնադրութիւն: «Տէրունական աղօթք»-ից անմիջապէս առաջ, ընդհատեց Ս. Պատարագի սովորական ընթացքը եւ հոգժ. Տ. Անանիա վրդ. Գումանեանը, իբրեւ խարտակիլակ, եկեղեցու ատեանի առջեւ գահին բազմած ձեռնադրիչ Սրբազան Հօր մօս առաջնորդեց Արա Բաղումեանին՝ դպրութեան եւ կիսասարկաւագութեան պաշտօն ստանալու համար:

Դպրութեան եւ կիսասարկաւագութեան ձեռնադրութիւնների կարգերը կատարեցին հերթականութեամբ: Պաշտօն ստացողի գլխի մազերից կտրւեցին՝ ի

նշան աշխարհիկ ցանկութիւններից հեռացման եւ եկեղեցական կեանքին նիրելու, ապա Հայոց եկեղեցու «փոքր պաշտօններ» կոչող աստիճաններ եւ արտօնութիւններ տրուցին Արային:



Ձեռնադրութիւնից յետոյ, յաւուր պատշաճի քարոզեց Առաջնորդ Սրբազան Հայոց, նախ տօնի առիթով անդրադառնալով Ս. Ներսէս Հայրապետի կեանքին ու գործունեութեանը, որը երիտասարդութեան տարիքից մինչեւ նրա վախճանը ամբողջութեամբ նիրում էր ու ծառայութիւն, այնուհետեւ ուրախութիւն խայտնելով ձեռնադրութեան առթիւ, շնորհաւորեց բոլորին, ապա խօսքն ուղղելով նոր պաշտօն ստացած բրշն. Արա կիս. Բաղումեանին, յորդորեց նրան, ինչպէս «Մաշտոցի» բառերն են թէլադրում՝ լինել խոնարհ, պարկեշտ եւ ուրախութեամբ իր պարտականութիւնները կատարող եկեղեցու սպասաւոր, պատի համարելով Հայ եկեղեցն եւ նրա ճամբռով հայ ժողովորին ծառայելու:

Թեմակալ առաջնորդը, տօնի առիթով, ողջոյնի եւ շնորհաւորանքի խօսք ուղղեց եկեղեցու հովում, Եկեղեցեաց վարչութեանը, դպիրներին, սպասաւորներին, եկեղեցու տիկնանց յանձնախմբին եւ ներկաներին:



Ս. Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ եւ Ս. Ներսէս Հայրապետի աջով կատարեց Զրօրինների արարողութիւն: Ապա եկեղեցու սրահում տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ ներկայացւեց գեղարևստական յայտագիր:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆԻՒՐԻԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ



Սպահանի հայոց թեմի Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Կենտրոնական յանձնախմբի Համալսարանական ենթայանձնախմբի նախաձեռնութեամբ, հինգշաբթի՝ 2015 թւականի մայիսի 21-ին, Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում տեղի ունեցաւ գիտաժողով՝ «Հայոց Ցեղասպանութիւն, պատմութիւն, դատապարտում եւ փոխհատուցում» խորագրով։ Գիտաժողովին որպէս ունկնդիրներ ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանը, թեմի հոգեւորականաց դասը, Իրանի Խալ. Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, Սպահան քաղաքի հինգերորդ շրջանի քաղաքապետ ճարտ. Ասաղաղեգանը, Իրանի կրօնական փոքրամասնութիւնների ներկայացուցիչները, պետական բարձրաստիճան պաշտօնատարներ, թեմի ազգային մարմինների, միութիւնների եւ հայոց ազգ. դպրոցների ներկայացուցիչները, տարբեր համալսարանների հայ եւ պարսիկ դասախոսներ ու ուսանողներ եւ Նոր Զուղայի ու Շահինշահրի հայ համայնքների անդամները։



Ծրագրի պաշտօնական բացումը կատարեց առաւտեան ժամը 10-ին, Իրանի Խալամական Հանրապետութեան հիմնի յոտնկայս ունկնդրութեամբ, ապա օրույ հանդիսավար՝ Զանտոն Աղաբարայեանը բարի-

գալստեան խօսք ուղղելով ներկաներին հրավիրեց դկտր. Սիլա Ալլահվերդեանին կազմակերպիչ յանձնախմբի խօսքն ընթերցելու, որից լեռոյ Սպահանի հայոց թեմի Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Կենտրոնական յանձնախմբի անունից արտայալուց յանձնախմբի ատենապետ Նոէլ Մինասեանը։



Պրմ. Մինասեանն իր խօսքում անդրադառնալով Հայոց Ցեղասպանութեան մարդկային կորուստներին, Ցեղասպանութեան հետեւանքով հայ ժողովրդին պատճառած նիւթա-բարոյական ահոելի վճաններին եւ «Յիշում եմ ու պահանջում» հշանաբանի պատգամին, աւելացրեց։ «Այս գիտաժողովի կազմակերպման նպատակն է՝ տարբեր երկրների մտաւորականների եւ դասախոսների գիտութեան եւ փորձի փոխանակման միջոցով կատարել փոքր, բայց հաստատուն քայլեր գիտական հետազոտութիւնների համար, օգտելով ժամանակակից մեթոդները՝ ախտորոշում, յանցագործութիւնների պատճառների քննարկում, կանխարգելում եւ որ ամենակարեւորն է՝ դատապարտում»։

Որպէս զեկուցաբեր սոյն գիտաժողովում ելոյթ ունեցան ազգութեամբ պարսիկ, հայ եւ թուրք 10 մտաւորականներ Իրանից, Հայաստանից եւ Լիբանանից, հետեւալ ծրագրով։

Առաջին հիսու՝ Առանցքային ելոյթներ բաժնում, նախագահութեամբ՝ Էդուարդ Դանիէլեանի եւ Նորայր

Թումանեանի, զեկուցաբերմերը ներկայացան հետեւալ թեմաներով՝



- Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութեան վերականգնումը, հիմնախնդիրներն ու հեռանկարները՝ Մոդուս Վիվենդի հասարակական ուսումնասիրութիւնների կենտրոնի ղեկավար՝ Արա Պապեան.

- Ցեղասպանութեան ընթացքում հայ որբերի բռնի դաւանակիսութիւնն ու ձուլումը. Անթուրայի որբանոցի իրավիճակը: Ձուլում և դիմադրում՝ պատմ. գիտ. դկտր. եւ Լիբանանում Ամերիկեան Համալսարանի՝ Հումանիտար գիտութիւնների ֆակուլտետի դասախոս՝ Սելիմ Մեհմեթ Դերինգիլ.



Երկրորդ նիստ՝ Հայոց Ցեղասպանութեան պատմաքաղաքան վերնթերցումները բաժնում, նախագահութեամբ՝ Արա Պապեանի եւ Սիլվա Ալլահվերդյանի, զեկուցաբերները ներկայացրին հետեւալ թեմաները՝

- Հայերի կոստրածները Բարիի նահանգում եւ թուրք-ադրբեջանական իշխանութիւնների պատասխանատվութիւնը՝ պատմ. գիտ. դկտր. պրոֆեսոր՝ Գէորգ Ստեփանեան, Հ.Հ.-ի Գ.Ա.Ա.-ի պատմութեան ինստիտուտ.

- Հայոց Ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման իրաւական ու քաղաքական հեռանկարները՝ պատմ. գիտ. դեկնածու, դոցենտ՝ Արմեն Մարտուրեան, Հ.Հ.-ի Գ.Ա.Ա.-ի պատմութեան ինստիտուտ.

- Հայաստանի պատմաքաղաքակրթական ամբողյ-

չականութիւնը ընդունվ թուրք-ադրբեջանական սմանկ կեղծարարութիւնների՝ պատմ. գիտ. դոկտոր՝ Էդմարդ Դանիելեան, Հ.Հ.-ի Գ.Ա.Ա.-ի պատմութեան ինստիտուտ.

- Հայաստանը օսմանական պատմական եւ աշխարհագրական աղբյուններում ու փաստաթղթերում (16-րդ դարից)՝ պատմ. գիտ. թեկնածու, Ի.Ի.Հ.-ի Խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր՝ Կարեն Խանլարեան.



Երրորդ նիստ՝ Միշազգային իրաւունք բաժնում, նախագահութեամբ՝ Կարեն Խանլարեանի եւ Անդրանիկ Սիմոնյանի, զեկուցաբերները հանդէս եկան հետեւալ թեմաներով՝

- Հայոց Ցեղասպանութեան իրաւական պարադրսները՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ եւ Իրանի «Խորասան» խլամական ազատ համալսարանի իրաւանական ֆակուլտետի դասախոս՝ Մոհիամմադ Շարիֆ Շահի.

- Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը երիտթուրքերի դատական վաւերագրերում (1919-1921)՝ պատմ. գիտ. թեկնածու եւ Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրութեան կենտրոնի գիտահետազօտական հիմնադրամի թուրքերէն բաժնի պատասխանատու՝ Մելինէ Անումեան.



Չորրորդ նիստ՝ Հայոց Ցեղասպանութեան մշակութային հետեւանքներ բաժնում, նախագահութեամբ՝ Ռոբերտ Բեգլարյանի եւ Մոհամմադ Շարիֆ Շահի,

գեկուցաբերմերը ներկայացան հետեւեալ թեմաներով՝

- Հայոց Ցեղասպանութիւնը եւ հայ գրականութեան աւանդոյթները» բան. գիտ. թեկնածու, դոցենտ եւ Թերախի իւլիամական ազատ համալսարանի Հայոց լեզու եւ գրականութեան ամբիոնի վարիչ՝ Անդրանիկ Սիմոնեան.

- Հայերի մշակութային ժառանգութեան ոչնչացումը՝ մշակութային եւ պատմական հետազօտող եւ «Պայման» պարբերականի խմբագրական կազմի անդամ՝ Շահին Ցովսէփեան.



Իրաքանչիւր ելոյթի աւարտին առիջ ընձեռւեց հանդիսատեսին իրեն յուզող հարցերն ուղղել գեկուցաբերին:

Դասախոսական ելոյթներն աւարտւեցին երեկոյեան ժամը 7:30-ին, որից յետոյ ընթերցւեց կազմակերպիչ յանձնախմբի ամփոփիչ խօսքը, ուր ընդգծել էին գիտաժողովում շեշտած խնդիրները հետեւեալ կարգով.

ա. Հայոց Ցեղասպանութեան հետեւանքով հայ ժողովուրդը կրեց մարդկային մեծ կորուստներ, ենթարկեց հայունազրկութեան, կորցրեց իր մշակութային հարստութեան հիմնական մասը եւ մազապուրծ փրկւածներից զգայի մասը բռնի կրօնափոխ եղաւ: Ցեղասպանութեան քաղաքականութեան շարունակութեան հետեւանքով բնաշնչւեցին նաև Բաքրի հայերը:

բ. Թուրքիայի իրարայաջորդ իշխանութիւնները շարունակել եւ շարունակում են իրենց ժխտողական քաղաքականութիւնը. կիրառելով կեղծարարական գործելառմ փոխում են հայկական տեղանունները եւ խեղաթիւրում պատմական եկեղեցիներն ու յուշակոթողները:

գ. Թուրքիայի իշխանութիւնների ժխտման պաշտօնական քաղաքականութիւնը մարդկայնօրէն եւ իրաւականօրէն չի կարող արդարացնել Օսմանական Թուրքիայի կողմից իրագործած Հայոց Ցեղասպանութիւնը:

դ. Իրաւական վատրականութիւն ունեցող փաստաթղթերը, ինչպէս նաև թուրքական պատմական աղբյուրները անհերքելիօրէն ապացուցում են Արեւատեան Հայաստանի բռնագրաւած հողերի պատկանելիութիւնը հայ ժողովրդին:

ե. Հայ ժողովրդի պահանջներն են՝ արդարութեան վերականգնումը, Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը միշագգային տարբեր կազմակերպութիւնների կողմից, յանցագործների դատապարտումը եւ փոխհատուցումը, որոնք երաշխաւորելու են նաև մարդկութեան դէմ յետագայ ցեղասպանութիւնների կանխարգելումը:

Վերջում որպէս օրիայ եղափակիչ ելոյթ՝ իր հայրական պատգամը փոխանցեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ Գերջ. Տ. Բաբգէն արք Զարեանը: Նա շեշտելով, որ 100-ամեակով չի աւարտւում հայ ժողովրդի աշխատանքը, այլ թեւակոխելով մի նոր հանգրւան պէտք է լինել՝ աւելի ուժեղ, աւելի միակամ ու աւելի գիտակից, յորդորեց՝ վստահել մեր ուժերին, համազգային մի նոր ռազմավարութիւն որդեգրել եւ միացեալ կամքով ու ուժով յաղթահարել մեր առջեւ դրւած բոլոր մարտահաւերները:

Այնուհետեւ բեմ հրափրւեցին Սպահանի Հայոց Թեմի Առաջնորդ Տէր Բաբգէն Արք. Զարեանը, Թեմական Խորհրդի ատենապետ՝ Վրէժ Տէր Մարտիրոսեանը, Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Կենտրոնական յանձնախմբի ատենապետ՝ Նոէլ Մինասեանը, Պատգամաւորական Ժողովի ատենապետ՝ Վարուժ Մինասեանը, որոնց ձեռամբ գնահատագրեր եւ յուշաներներ յանձնւեցին օրիայ զեկուցաբերներին:



**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆԻՒՐԻԱԾ
ԳԻՏԱԺՈՂՈՎՔ ՀԱՅԱՏԱՆԻՑ ԺԱՄԱՆԱԾ ԴԱՍԱԿՑՈՒԹԵԱՄՐ**



Նոր Զուղայի Հայ Դատի «Արձագանք» քարոզչական յանձնախմբի նախաձեռնութեամբ՝ ուրբաթ՝ մայիսի 22-ի երեկոյեան ժամը 7:30-ին, շրջանի Հայ Դատի յանձնախմբի կենտրոնատեղի սրահում, կազմակերպութեալ էր ժողովրդական հանդիպում, որտեղ ներկաներն առիթ ունեցան հանդիպելու Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին նվիրած «Հայոց Ցեղասպանութիւն, պատմութիւն, դատապարտում եւ փոխհատուցում» խորագրով գիտաժողովի շրջագծում Հայաստանից



ժամանած հինգ գեկուցաբերեր՝ «Մոդուս Վիվենդի»

հասարակական ուսումնասիրութիւնների կենտրոնի ղեկավար, դիաճագետ Արա Պապեանին, պատմ. գիտ. դոկտոր (Հ.Հ.-ի Գ.Ա.Ա.-ի պատմութեան ինստիտուտ) Էդուարդ Դանիելեանին, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ (Հ.Հ.-ի Գ.Ա.Ա.-ի պատմութեան ինստիտուտ) Արմեն Մարտուրեանին, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (Հ.Հ.-ի Գ.Ա.Ա.-ի պատմութեան ինստիտուտ) Գևորգ Ստեփանեանին եւ «Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրութեան կենտրոն» գիտահետազօտական հիմնադրամի թուրքերէն բաժնի պատասխանատու, պատմ. գիտ. թեկնածու Մելինէ Անումեանին:

Ներկայ էին քահանայից դասի, ազգային մարմինների, միութիւնների եւ հայոց ագօային դպրոցների ներկայացուցիչները եւ Նոր Զուղայից ու Շահինշահրից հայ համայնքների անդամները:

Ակգրում կազմակերպիչ յանձնախմբի անունից բարի գալատեան խօսքով հանդէս եկաւ Սուէ Պողոսեանը, որից յետոյ նախ Արա Պապեանը դասախոսեց «Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութեան վերականգնումը, հիմնախնդիրներն ու հեռանկարները» նիւթի շուրջ, ապա Մելինէ Անումեանը ելոյթ ունեցաւ «Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը երիտ-թուրքերի դատական վաւերագրերում» թեմայով:

Իւրաքանչիւր ելոյթի աւարտին ներկաներն իրենց յուզող հարցերի պատասխաններն ստացան դասախոսներից եւ առիթ ունեցան իրենց տեսակետներն արտապատելու արծարծած նիւթերի շուրջ, որոնցով առաւել մանրամաս քննարկեցին դասախոսական թեմաները:



ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԻԵՅ «ՓՐԿՈՒԹԵԱՆ ՔԱՐՏԷՐ» ՖԻԼՄԸ

Կիրակի 21 յունիսի 2015 թականին, նախաձեռնութեամբ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի կենտրոնական յանձնախմբի, տեղի ունեցաւ «Փրկութեան քարտէզ» ֆիլմի ցուցադրութիւնը, Նոր Զուղայի Հայոց ազգ. կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում, ներկայութեամբ՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի, Ազգային մարմինների ներկայացուցիչների, Ցեղասպանութեան 100-ամեակի կենտրոնական յանձնախմբի, ֆիլմի հեղինակ եւ պրոդիսեր Մանուկ Սարիբեկեանի, ստուդիոյի արտաքին կապերի պատասխանատու, իրանագետ Ժանն Յակոբանի համայնքի անդամների:

Ֆիլմի ցուցադրութիւնից առաջ օրուայ հաղորդավար՝ Արդինէ Ստեփանեանը ողջունելով ներկաներին, հակիրծ կերպով ներկայացրեց ֆիլմի թեման: Նա իր խօսքերում նշեց. «Փիլմը պատմում է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի համամարդկային ողբերգու-



թիւնների, յատկապէս Հայոց Ցեղասպանութեան ժամանակ առաջացած հումանիտարական շարժման մասին: Ֆիլմի հերոսները պատմութեանը յայտնի հումանիտարներ են, իրական մարդիկ, ովքեր տեսել են հայ ազգի կոտորածները: Նրանք եւրոպացի հինգ կանայք

Են՝ Քարէն Եփփէ, Մարիա Եակորսեն, Բողիլ Բեօրն,
Ալմա Իւհանսոն, Աննա Հեղւիդ Բիւլը»:



Այսուհետեւ բեմ հրավիրեց ֆիլմի հեղինակ եւ պրոդյուսեր Մանուէլ Սարիբէկեանին՝ ֆիլմի մասին տեղեկութիւնները լրացնելու համար:

Պր. Սարիբէկեանը իր ուրախութիւնը յայտնեց Իրանում եւ հարազատ հայրենակիցների օշախում գտնելու առթիւ, տեղեկացնելով, որ Հայաստանից քացի առաջին երկիրը, որտեղ ֆիլմը ցուցադրվել է, դա Իրանն է: Ապա անդրադառնալով ֆիլմի բովանդակութեանը, քացարեց, որ «Փրկութեան քարտէզ»-ը իրական փաստերի հիման վրայ է պատրաստվել, որտեղ ֆիլմի հերոսութիւնների ճակատագրական պատմութիւններն ու Ըկարագրութիւնները եւ յուշագրութիւնները ուղղակիորէն ներկայացնել են կինոյի լեզուվ: Նա աւելացրեց, որ Ըկարահանումները իրականցել են 9 երկրներում, իսկ ֆիլմի ստեղծման համար օգտագործվել են ֆիլմի հերոսների կենսագրական գրքերի հեղինակների տրամադրած փաստագրութիւններն ու հիւթերը:



Ապա հանդիսատեսը յուզմունքով հետեւեց ֆիլմի ցուցադրութեանը, որից յետոյ կրկին անգամ բեմ հրավիրեց պր. Սարիբէկեանը, որը տեղեկութիւններ փոխանցեց ֆիլմի նախագծի ստեղծման եւ ընթացքի մասին, հանդիսատեսին ներկայացնելով ֆիլմի պատրաստման համար դերակատար անձանց: Նա մատնանշելով ֆիլմի ստեղծման տարիներին հանդիպած ֆինանսական դժւարութիւններին, իր երախագիտութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց նոր Զուլայի հայրենակիցներին, որոնք իրենց մասնակցութեամբ հա-

մալրեցին ֆիլմի հովանաւորողների եւ աջակիցների շարքը, ասելով որ. «Իմ համոզմունքն է, որ մենք միշտ կարիք ունենք ներկայանալու աշխարհի առջեւ»:

Վեջում արև. Սարիբէկեանը իր շնորհակալութիւնը յայտնեց Սպահանի Հայոց Թեմի առաջնորդին, Ցեղասպանութեան 100-ամեակի յանձնախմբին եւ Թեմական Խորհրդին, որ առիթ ընդէեցին ֆիլմի ցուցադրութեանը եւ MAN PICTURES ստուդիոյի կողմից իր ձեռամբ յուշանելը յանձնեց Սպահանի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանին:

Եզրափակիչ խօսքով հանդէս եկա Թեմիս առաջնորդ Տէր Բաբգէն արք. Չարեանը: Նա իր գնահատանքի խօսքն ուղղելով ֆիլմի պատրաստողներին եւ պատախանատուներին, նշեց, որ ֆիլմի միջոցով հնարաւորութիւն է ստեղծել ամբողջ աշխարհին ճանաչեցնելու Հայոց Ցեղասպանութիւնը՝ ներկայացնելով օտարազգիների յուշագրութիւնները:



Գերշ. Սրբազն Հայոք ֆիլմի հերոսներին «որբախնամ մայրեր» կոչումը տալով, իր երախագիտութիւնը յայտնեց նրանց, ովքեր խմանել ու դաստիարակել են հայ որբերին իբրեւ քրիստոնեաներ, աւելացնելով, որ այդ որբերի զաւակներն ու թռնները, այժմ սփիւրքի տարբեր վայրերում, տարբեր հանգամանքներով, շարունակում են ապրել իբրեւ քրիստոնեայ հայեր: Սրբազն Հայոք մտքի թռիչք կատարելով դէպի իր մանկութիւն, յայտնեց, որ իր դպրոցական օրերին իրենց ուսուցիչ՝ առաջնորդ Ներսէս արք. Բախսիկեանը, որը «Թոշնոց Բոյն» որբանոցի որբերից է եղել, աշակերտներին պատմել է ֆիլմի հերոսութիւններից՝ Մարիա Եակորսենի մասին, թէ ինչպիսի սիրով, նիրումնով ու զրոյնութեամբ է վերաբերել հայ որբերին եւ մինչ այսօր սյն որբանոցում պահում է նրա յուշաքարը, արխիւներն ու Ըկարները: Նա անդրադառնալով «Բարի Սամարեցի» առակին նշեց, որ շնայած որոշ ազգեր ականատես լինելով այս ճշմարտութեանը, անտարբեր են անցել դրա կողքից, բայց նաև գտնել են «բարի սամարեցիներ», որոնք մարդասիրական վերաբերմունք են ցուցաբերել, եւ իր խօսքն աւարտեց ասելով. «Ով թուրք խղճմտանք, յախ' եւ ձայն տո՛ւր, որովհետեւ արդարութիւնը յաղթելու է»:

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՍՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆԻՒՐԻԱԾ ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՐՑՈՅԹ՝
«ՔԱՆԱՆԵԱՆ» ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՍԱՍՍԱԿՅՈՒԹԵԱՄԲ**

Շաբաթ՝ մայիսի 2-ի երեկոյեան, Նոր Զուղայի հայոց ազգ «Քանանեան» աղջկանց միջնակարգ դպրոցի ուսուցչական կազմի նախաձեռնութեամբ, հայոց ազգ կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» դահլիճում, կազմակերպել էր Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին նիւրած հայրենագիտական մրցոյթ՝ մասնակցութեամբ դպրոցի աշակերտութիների ծնողների, իսկ որպէս հանդիսատես ծրագրին ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի թեմական խորհրդի եւ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման Սպահանի հայոց թեմի Կենտրոնական յանձնախմբի ատենապետ Նուլ Միջնասեանը, Կրթական խորհրդի ներկայացուցիչ Սաթենիկ Ալետումեանը, դպրոցի ուսուցչական կազմը, աշակերտութիւներն ու ծնողները:

Մրցոյթին մասնակից ծնողներին ընկերակցում էին իրենց զաւակները, ովքեր ծրագրին նախապատրաստելու համար ուսումնասիրել եւ սերտել էին մրցոյթին առնչող մի շարք նիւթեր, յատկապէս դպրոցի կողմից իրենց տրամադրած հայրենագիտական թեմաների փաթեթը:



Ծրագիրն սկիզբ առաւ դպրոցի փոխտեսչութիւն Ռիմա Սիմոնեանի ներկաներին ուղղված ողջոյնի եւ բացման խօսքով, որտեղ ընդգծեց. «Հայր իւրովի է ընկալում բնութեան զարթօնքը եւ ապրիլ ամիսը, քանի որ զարունը տարիներ շարունակ յագեցած է եղել մեր միլիոնաւոր նահատակների արդար կանչով եւ հայ ժողովրդի բողոքի ողբեկոչումներով ու պահանջատիրութեամբ։ Այսօր առաւել քան երբեւէ հայ ժողովուրդը պէտք է միասնական լինի եւ ինչպէս Զարենցն է ասում։ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»։ Խօսքի շարունակութեան մէջ տկն. Սիմոնեանը ներկայացրեց մրցոյթի իրաւարներին՝ դպրոցի հայերէն առարկաների ուսուցուիթեր՝ Սեղան Դիլանչեանին եւ Քառոլին Դիլանչեանին ու գրադարանավարութիւն՝ Կարին Տէր-Մարտիրոսեանին, Շշելով նաեւ, որ մրցոյթին առնչող համակարգչային ձեւակերպումները կատարել են Վերգինէ Միրզախա-

նեանի միջոցով։



Այնուհետեւ իրաւարար կազմի միջոցով հարկ եղած բացատրութիւնները տրւեցին մրցոյթի ձեւի եւ կանոնների կապակցութեամբ, որից յետոյ թէժ մրցակցութիւն ընթացաւ մասնակիցների՝ «Նայիրի», «Հաւատք», «Արցախ», «Անմոռուկ», «Կիլիկիա» եւ «Զարթօնք» վեց խմբերի միջւեւ։ Առաջին փուլի աւարտին՝ իրաւարարների միջոցով գնահատականների ամփոփումից յետոյ, եզրափակիչ փուլ դուրս եկան «Կիլիկիա» եւ «Անմոռուկ» խմբերը, որոնք սոյն փուլի ընթացքում եւս պատասխանցին մի շարք հարցերի ու կառուցեցին նախատեսած փազելը։ Արդիւնքում մրցոյթի յաղթողը ճանաչւեց «Կիլիկիա» խումբը։



Վերջում բոլոր մասնակիցները եւ իրենց զաւակները գնահատագրեր ստացան Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի թեմի Կենտրոնական յանձնախմբի կողմից, իսկ յուշանելու յանձնելոց յաղթող խմբին։

Աւելացնենք նաեւ, որ «Քանանեան» դպրոցի պատասխանատուների նախաձեռնութեամբ, Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին նիւրած միջոցառումների շրջագծում, ապրիլի 17-ի առաւօտեան, Ս. Ամենափրկչեան վաճքի շրջափակում կազմակերպել էր աշակերտական workshop, որտեղ դպրոցի աշակերտութիւնները պատրաստեցին պահանջատիրական եւ դատապարտող թեմաներով պատի թերթեր, ինչը մեծ ուշադրութեան արժանացաւ յատկապէս Ս.Ա. վաճք այցելող օտարերկրացի գրուաշրջիկների կողմից։

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵՆԱԿԻՆ ՆԻՒՐԻԱԾ ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՐՅՈՅՅԱՌ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳ. «ԱՐՄԵՆ» ՏԱՐՐԱԿԱՆ ԵՐԿԱՍԵՐ ԴՊՐՈՅՈՒՄ



Նախաձեռնութեամբ Նոր Զուղայի հայոց ազգ. «Արմէն» տարրական երկսեր դպրոցի տեսչութեան եւ ուսուցական կազմի ու համագործակցութեամբ դպրոցի ծնողական խորհրդի, Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման ծրագրերի շարանում, ուրբաթ՝ մայիսի 22-ի երեկոյեան ժամը 5-ին, հայոց ազգ. կրթահամալիիր «Ալենուշ Տէրեան» սրահում, իրականացւեց հայրենագիտական մրցոյթ, որին մասնակցել էին դպրոցի 5-րդ եւ 6-րդ դասարանների աշակերտ-ուիրիները: Ծրագրին որպէս հանդիսատես ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Կենտրոնական յանձնախմբի ներկայացուցիչներ՝ Նուէլ Միհնասեանն ու Արշալոյս Խուդավերդեանը, «Արմէն» տարրական դպրոցի ուսուցական կազմը, ծնողական խորհրդի ու աշակերտների ծնողներն ու հարազանները:

Աշակերտական մրցոյթն սկիզբ առաւ դպրոցի տեսուչ Վրէէ Շիրանեանի բացման խօսքով, ով ողջունելով ներկաներին, բարձր գնահատեց Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին նիրաւած ծրագրերի կազմակերպման ուղղութեամբ համայնքի ազգային հաստատութիւնների կատարած ներդրումները՝ վստահութիւն յացունելով, որ յետագայում եւս շարունակելու է նմանատիպ միջոցառումների իրագործումը: Պին. Շիրանեանն աւելացրեց նաև, որ անշուշտ 100-ամեակով անելիքները չեն աւարտում եւ սա նոր սկիզբ է լինելու մեր պահանջատիրական աշխատանքների համար:



Բացման խօսքից յետոյ մեկնարկը տրւեց հայրենագիտական մրցոյթի, որին մասնակցել էին 35 աշակերտներ, բաժանած եօթ խմբերի միջեւ: Մասնակից խմբերի անուններն էին՝ Հայաստան, Արցախ, Կիլիկիա, Նայիրի, Աղանա, Անմոռուկ եւ Սարդարապատ: Մրցոյթի հարցերն ունեին թեմատիկ բաժանումներ եւ իրաւարար կազմի իրաքանչիւր անդամ ստանձնելով մի տեսակ հարցաշարի պատասխանատութիւնը,

խմբերի համար ընթերցում էր պատկան հարցերը եւ գնահատում պատասխանները: Իրաւարար կազմի անդամները նշանակել էին դպրոցի ուսուցական կազմից հետեւեալ կարգով՝ գիտելիքներ՝ Սեղա Բարդեան, Հայոց պատմութիւն՝ Ժանետ Բաղումեան, աշխարհագրութիւն՝ Անահիտ Օհնանեան եւ կրօն՝ Արմինէ Սիմոնեան:



Յատկանշական է, որ սոյն հարցերի կապակցութեամբ նախապէս պատարաստել էր հիփերի եւ հարց ու պատասխանների փաթեթ, որը տրամադրել էր մասնակիցներին, իսկ աշակերտների գիտելիքների եւ արագաշարժութեան մակարդակի զարգացման նպատակով նախատեսել էր նաև ընդհանուր գիտելիքների հարցեր, որոնց պատասխանողը պէտք է բոլորից շուտ հնչեցնէր սեղանի վրայ տեղադրւած զանգը: Սոյն հարցերի պատասխանատուն էր Միգանուշ Տէր-Մարտիրոսեանը, ով միեւնոյն ժամանակ վարում էր ծրագիրը: Արդիւնքների ամփոփումը կատարում էր Ազիդա Ալեքսանդրեանի միջոցով, իսկ մրցոյթի առնութեամբ համակարգչային բոլոր ձեւաւորումներն ու էկրանի վրայ ցուցադրուղ պատկերների դասաւորումը կատարել էր Արփինէ Ցովսէվեանը:



Բաւականին թէժ ու հաճելի մրցակցութիւն ընթացաւ մասնակից եօթ խմբերի միջեւ եւ արդինքների ամփոփումից յետոյ Հայաստան ու Աղանա խմբերը յաջողեցին անցնել եզրափակիչ փով:



Ընդմիջումից յետոյ, նախքան եզրափակիչ փովի

մեկնարկը, Սպահանի հայոց թեմի Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի Կենտրոնական յանձնախմբի ատենապետ Նոէլ Մինասեանը բարձր գնահատելով դպրոցի այս նախաձեռնութիւնը, աւելացրեց, որ մրցոյթի ընթացքում հնչած հարց ու պատասխանները եղել են հետաքրքիր եւ բովանդակալից, որոնց միջոցով բարձրացել են թէ աշակերտութեան եւ թէ հանդիսատեսի տեղեկութիւնները:

Եզրափակիչ փովում երկու խմբերը դարձեալ պատասխանեցին նախատեսած հարցերին եւ կառուցեցին փազելի վերածած Հայաստանի քարտեզը: Արդինքում մրցոյթի յաղթող ճանաչւեց Աղանա խումբը, իսկ երկրորդ հանդիսացաւ Հայաստանը:

Ծրագրի աւարտին Սպահանի հայոց թեմի Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի Կենտրոնական յանձնախմբի կողմից բոլոր մասնակիցներին շնորհւեցին գնահատագրեր, իսկ առաջին եւ երկրորդ հանդիսացողներին՝ պարգևներ: Աշակերտներն իրենց գնահատագրերն ու պարգևները ստացան 100-ամեակի Կենտրոնական յանձնախմբի անդամ Արշալույ Խուդավերդեանի ու դպրոցի տեսուչներ՝ Լիոնթին Աբրահամեանի եւ Վրէժ Շիրանեանի ձեռամբ:

ՆՈՐ ԶՈՒ-ՂՅՁԻ ՀԱՅՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՄՊԱԿԿՊԱՐՏԵԶ-ՆՎԻՎԿՐԹԱՎԱՆ ԻՐ ԱՄՊՎԵՐՁԻ ՁԵՐ-ՆԱՐԿՈՎ ՀԱՅՆԴԱՎԱԿԻՐ ԿԵՐՊՈՎ ԵԶՐԱՓՎԿԵՑ ՈՒՍՈՒՄՆԱԿՎՆ ՑՎՐԻՆ

Երկուաբրի, յունիսի 1-ին, երեխաների իրաւունքների պաշտպանութեան միջազգային օրը, երեկոյեան ժամը 7-ին, Նոր Զուլայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում տեղի ունեցաւ Նոր Զուլայի հայոց ազգ. մանկապարտէզ-նախակրթարանի աւարտական հանդէսը, ներկայութեամբ՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բաբգէն արք. Զարեանի, ազգային մարմինների ներկայացուցիչների, սաների ծնողների ու հարազատների:



Սկզբում ողջոյնի եւ բացման խօսքով հանդէս եկաւ դպրոցի տեսչութի Քառուլին Դիլանեանը, ով անդրադառնալով մանուկների իրաւունքների պաշտպանութեան միջազգային օրւան, կարեւորութեամբ շնչուեց, թէ մանուկներն ունեն այնպիսի իրաւունքներ, որոնց ոչ ոք իրաւունք չունի ունահարելու եւ շրջանցելու: Նա իր խօսքի շարունակութեան մէջ մատնաշելով օրւայ գեղարևստական ծրագիրը, որը յագեցած է Ժողովրդական երգերով ու հայ դպրոցին նվիրած ելոյթներով, աւելացրեց, թէ մանկապարտէզի տարիքից սկսած մեր մանուկները երգերի, բանաստեղծութիւնների եւ թատ-



որմի միջոցով պիտի կապեն մեր ակունքներին եւ զգան մեր ոսկեղեցիկ լեզվի քաղցրութիւնը:

Տեսչուիու խօսքից յետոյ աշակերտական ելոյթների մեկնարկը տրեց հայկական շուրջպարով՝ մանկապարտէզի երկու Դեղին խմբակների սաների մատուցմամբ, ովքեր իրենց աւանդական տարագներով եւ պարով, հայ մշակոյթի բոյրով ողողեցին դահլիճը:



Պարային ելոյթն աւարտուելուն պէս՝ բեմում իրենց ընկերներին միացան դպրոցի կրտսերները՝ Վարդագոյն խմբակի երեխաները, ովքեր հանդէսը զարդարեցին արտասանութեամբ՝ նկրած դպրոցին ու դպրոցում կատարող բոլոր հաճելի աշխատանքներին: Ապա հնչեց Ժողովրդական մանկական երգերի շարան, որը դիպուկ դասաւորութեամբ ընդմիմշուռ էր Դեղին խմբակների սաների միջոցով արտասանուող խօսքերով ու ասմունքներով՝ ժողովրդական երգերի ծագման ու թեմաների եւ յատկապէս հայկական աւանդական նագարանների կապակցութեամբ:



Յաջորդի իրականացւեց նախակրթարանի աշակերտների ծրագրը: Ակգրում գրանանաշ դարձած երեխաները բեմ ներս մտան մէկական փուչիկներով, ապա համաշափ շարժումներից յետոյ գունագեղ այդ խաղալիքները տեղադրեցին այբուրենի տառերով զարդարուած ցուցանակների վրայ: Այնուհետեւ ծրագիրը շարունակեց աշակերտների խօսքերով՝ նկրած դպրոցին, դասատուներին, հայ գրերին եւ յատկապէս մանուկների իրաւունքներին: Ներկայացումը յագեցած էր մանկական եւ հայրենասիրական երգերով, որն աւարտւեց աւանդոյթ դարձած «Հրամեշտ այբունարանին» երգով ու շրջանաւարտների միջոցով աւարտական գլխարկների վեր նետումով:

Ծրագրի երկրորդ բաժնում ձեռամբ թեմակալ առաջնորդ գերշ. Տ.

Բարգէն արք. Զարեանի, Կրթական խորհրդի ներկայացուցիչ Զանսոն Աղաբայեանի, տեսչուիի Քառողին Դիլանցանի եւ պատկան ուսուցիչների, առամձնաբար տեղի ունեցաւ մանկապարտէզնախակրթարանի սաների վկայագրերի բաշխման արարողութիւնը:



Անզուգական եւ ամբողջովին աշխոյժ ու հաճելի երեկոն նզրափակւեց թեմակալ առաջնորդ Սրբազն Հօր հայրական պատգամով, ով աշակերտների ժամանելու եւ աշխուժութիւնը բոլորի համար մեծ ուրախութեան առիթ համարելով եւ գնահատելով հայ դպրոցում իրականացւող դաստիարակչական աշխատանքները, ասաց. «Հայ դպրոցը աշակերտներին առողջ դաստիարակութիւն տալու առաքելութիւն ունի: Մեր երիխանները հայ դպրոցում մեծանում են ոչ միայն հասակով, այլև մտքով ու հոգով, ինչը յուսաղրում է մեզ, քանի որ գիտենք վաղը ունենալու ենք այնպիսի սերունդ, որը նոյն ոգով տէր է կանգնելու մեր արժէքներին, իրաւունքներին ու սրբութիւններին»: Սրբազն Հայրն իր պատգամն աւարտեց գնահատանքի խօսքեր ուղղելով Կրթական խորհրդին, դպրոցի անձնակազմին, Ծնողական խորհրդին եւ ծնողներին:

Վերջում կից սրահում ներկաներն առիթ ունեցան դիտելու մանկապարտէզնախակրթարանի սաների անհատական եւ խմբական ձեռքի աշխատանքներից կազմած ցուցահանդէսը:

ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆԻՒՐԻԱԾ ԱՍՄՈՒՆՔԻ ՄՐՅՈՅԹ-ՓԱԼ-Ա.ՏՕՆ

Հովանաւրութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բաբգէն արք. Զարեանի եւ Ասիաձեռնութեամբ նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մշակութային միասուրի վարչութեան, թալականիս հիմնացաբթի՝ մայիսի 7-ի երեկոյեան, միութեան հանդիսութիւնների սրահում տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին նվիրած ասմունքի մրցոյթ-փառատօն:

Երեկոյի բացումը կատարեցին միութեան Մշակութային միասուրի «Կոունկ» ասմունքի խմբի աւագ անդամներ՝ Կարին Տէր-Մարտիրոսեանը, Մանիա Ղուկասեանը եւ Գայիանէ Եղիազարեանը:



Հանդիսավարները բնութագրեցին Հայոց Յեղասպանութիւնն ու Ծրա հետեւաճռով տեղի ունեցած մարդկային եւ մշակութային շարդը, Հայաստանի եւ աշխարհասիրու հայութեան պաքարն ու գոյատեւումը, վերածնունդն ու յաղթանակը եւ հայ ժողովրդի յաւերժութիւնը:

Որպէս փառատօնի նախաբան՝ Գայիանէ Եղիազարեանը եւ Մանիա Ղուկասեանը ներկայացրին Վարդգևս Պետրոսեանի «Հայկական Էսքզուեր»-ից հատուածներ, որի տպաւրութիւնն այնպէս էր, կարծես կանգնած են Զարենցեան կամարի ներքոյ եւ գովերգում են «Կամարից ներքեւ զիթիսարի քարէ սկուտեղի մէջ Հայստանը...»:

Չարունակութեան մէջ Ալինա Տէր-Սուրբիասեանը եւ Թալին Մովսիսեանը խոր ապրումներով ներկայացրին Պարոյր Սեւակի «Ղօղանջ Եղենական» ստեղծագործութիւնը՝ միաձուլած Եղենաշունչ մենապարով:



Այնուհետեւ տեղի ունեցաւ մրցոյթի մասնակիցների

կատարումները, որոնք ըստ անխալ առոգանութեան, արտապայտիչ ներկայացման, բեմական կեցւածքի եւ նիւթի ընկալման դաստիցին Հայոց լեզվի եւ գրականութեան ուսուցչութիւն Սեւակ Դիլանցեանը, միութեան Մշակութային միասուրի «Կոունկ» ասմունքի աւագ ասմունքողներ՝ Լեռնիկ Շատուրեանն ու Արթին Մուրադեանը եւ Սպահանի Հայոց թեմի Կրթական խորհրդի փոխառաջնային՝ Արթին Քեշիշեանը:



Մրցոյթային բաժինը ընդմիջւեց «Կոունկ» ասմունքի խմբի անդամների ոչ մրցութային անզուգական կատարումներով, որի ընթացքում Լալազէ Խաղողուեանը ասմունքեց Մետարսէի «Գիշերը Սումգայիթում» բանաստեղծութիւնը, Կարէն Խանլարեանը՝ Վարանդի «Շառաչող շղթաներ»-ը, իսկ անհատ կատարողներ՝ Միրօ Ղազարեանը եւ Մենուա Յովսէկեանը միասնաբար ներկայացրին Պարոյր Սեւակի «Երգ Եռաձայն»-ը: Հետաքրքիր էր նաև «Կոունկ» պարախմբի մենակատար Քրիստինէ Յակոբեանի պարային կատարումներով թեմաների եւ բեմայարդարման փոփոխութեան եղանակն ու պատկերների էկրանաւորումը:



Մրցոյթային բաժինը փակեց հանդիսավար Կարին



Տէր Մարտիրոսեանը, դարձեալ «Զարենցեան կամարի» ներքոյ՝ հետեւեալ գեղեցիկ պատգամով «...Եւ այդպէս է ապրում, հասակ առնում մեր անրմբռնելի պատմութեան վերջին փրկւած երեխան՝ Հայաստանը, զօրացնենք այդ երեխային եւ դողանք նրա վրայ եւ դողանք նրա վրայ»:



Մինչ գնահատականների ամփոփումը, ներկաները վայելեցին Ս.Ա. վաճքի «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի մենակատարներ՝ Թամիա Մինասեանի, Վանա Շիրանեանի եւ Հարմա Կարապետեանի կատարմամբ ոգեշնչող երգերը, որից յետոյ բեմ հրահրւեց թեմակալ առաջնորդը, ով բարձր գնահատելով փառատօնի կազմակերպումը եւ այն Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նիմիտուու մտայլացումը, յայտնեց, որ իրաքանչիլ բանաստեղծի խօսքը յիշեցնող եւ միեւնոյն ժամանակ պահանջող խօսք է, որպէսզի իրաքանչիլ հայորդի, յիշի եւ շմոռանայ այն կտակը, որ փոխանցել են մեզ մեր սուրբ նահատակները, նաեւ պահանջատէր դառնայ մեր արդար իրաւունքների ու մեր սեփականութիւնը համարուի հայրենի հողի:

Սրբազն Հայոց գնահատակի խօսք ուղղելով փառատօնի պատասխանատուններին, իրաւուրար

կազմին, հանդիսավարներին եւ յատկապէս դրաւտելով մասնակիցներին, նշեց. «Ինձ համար իւրաքանչիւր մասնակցող յաղթող է, որովհետեւ քաջութիւն է ունեցել 100-ամեակի առիթով իր խօսքը եւ իր ձայնը լսելի դարձնել աշխարհին»: Սրբազն հայրը յարգանքի խօսք ասելով սուրբ նահատակներին, Հայաստանին, Նոր Ջուղայի հայ համայնքին ու համայն հայութեանը, եզրափակեց իր խօսքը:

Յաջորդի խօսքը տրեց իրաւուրար կազմի ներկայացուցիչ Արքին Քեշիշեամին: Նա ես փառատօնի կազմակերպման առիթով իր ուրախութիւնն ու գոհունակութիւնը յայտնելով, ասաց. «Կարեւորը մասնակիցների հայկական ողին էր եւ հայ գրականութեան հանդէպ ցուցաբերած սէրն ու համակրանքը, որից իրաւուրար կազմը շատ տպաւորւած է եւ ուրախ»:



Փառատօնի աւարտին գնահատագրերը յանձնելու համար բեմ հրահրւեցին Սպահանի Հայոց թեմի առաջնորդ եւ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Կենտրոնական յանձնախմբի նախագահ՝ Տէր Բարգէն արք. Զարեանը, Սպահանի Հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետ եւ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Կենտրոնական յանձնախմբի ատենապետ՝ Նոէլ Մինասեանը եւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Կենտրոնական վարչութեան նախագահ՝ Մասիս Մինասեանը:

Մրցութեան մասնակիցները գնահատագրեր ստա-

ցան հետեւեալ կարգով.

Գերազանց՝ Ալինա Ալէքսանդրեան, Գեղանի Ղարախանեան, Շաղիկ Մատթէոսեան, Մեղրի Ղուկասեան, Նազէ Ասատրեան, Թանիա Մինասեան

Շատ լաւ Անդրիա Խաչատրեան, Վանէ Ցարութիւնեան, Նարէ Վարդանեան, Արինէ Խաղովեան, Վանանդ Խաղովեան եւ Անի Ղազարեան, Վերգինէ Համբարձումնան

Լաւ՝ Քրիստին Նազարեան, Հենրիկ Գրիգորեան, Արփա Մարգարեան

«Հանդիսատեսի համակրանք» մրցանակը շահեց Թանիա Մինասեանը:

Մրցոյթ-փառատօնին մասնակիցները հանդէս եկան ամենայն պատրաստածութեամբ եւ պատասխա-

նատուրթեամբ:

Զենարկի ծրագրաւորումն ու իրականացումը կատարւեց միութեան Մշակութային միաւորի «Կոռոնկ» ասմունքի խմբի պատասխանատու Ռիմա Սիմոնեանի եւ խմբի աւագ անդամ Կարին Տէր-Մարտիրոսեանի ղեկավարութեամբ, որին իրենց համագործակցութիւնը բերեցին Վերգինէ Միրզախանեանը, ով կատարեց տեսանիւթեամբ ու պատկերների էկրանաւորումը, Նայիրի Այազեանը եւ Անաշիա Մելիքեանը (բեմայրդարում), Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի ղեկավար՝ Արմէն Ամիրիսանեանը, պարուոյց՝ Յակոբ Մարգարեանը եւ հնչիւնային բաժնի պատասխանատուներ՝ Սեւադա Խաչիկեանն ու Ասպետ Սիմոնեանը:

Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 60-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ ՏՕՆԱՀԱՆԴԵՍ



Նախաձեռնութեամբ Ն.Զ. Հայ Մ.Մ «Արարատ» միութեան հիմնադրման 60-ամեակի Յոթելեանական յանձնախմբի, ուրբար՝ յունիսի 19-ի երեկոյեան, միութեան բացօթեայ տարածքում դաշտահանդէսի տեսքով կայացաւ տօնահանդէս, որով մեկնարկեց Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան 60-ամեակին նիրաւած միջոցառումների շարանը:



Երեկոն, որին ներկայ էին Նոր Զուղայի եւ Շահին-

շահի հայ համայնքի անդամները, սկսւեց օրւայ հանդիսավարուիի Մանիա Ղուկասեանի ողջոյնի եւ բացման խօսքով, որից յետոյ հանդիսավարութիւն տեղիկութիւններ փոխանցեց երեկոյի մասին, ապա ամփոփ կերպով անդրադարձաւ միութեան հիմնադրմանն ու գործունելութեանը:

Երեկոն խանդավառութեամբ ողողւեց համայնքի սիրուած երգիչ Մասիս Պարսամեանի եւ նրան ընկերակցող նագախմբի անդամներ՝ Անդրէ Պարսամեանի, Սեպուհ Ղուկասեանի եւ Վահէ Ցարութիւնեանի երգ-երաժշտութեամբ: Ընթացքում հոծ բազմութիւնը էկրանի վրայ ցուցադրուող լուսանկարների միջոցով հաղորդակից դարձաւ միութեան անցեաի հետ եւ ծանօթացաւ կատարուող աշխատանքներին: Միեւնյն ժամանակ, վայելեց միութեան Երեցների, Մշակութային, Մարզական, Սկաուտական եւ Ուսանողական միասնորդների ու Յանձնախմբի միջոցով պատրաստած ուսեւստներն ու կազմակերպած բազմաթիւ խաղերը, իսկ երեսաները վայելեցին նաև մանկական բաժնում տեղակայած նոր խաղերը:

Յոթելեանական յանձնախումբը բաղկացած է միութեան եւ Շահինշահիրի մասնաճիւղի կենտրոնական եւ միաւորների վարչութիւնների ներկայացուցիչներից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ «ՓԻՒՆԻԿ»
ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ
ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՀԱԽԱԲԱԿԱՆԸ ՀԻՒՐԾՆԿԱԼԻԵՑ
ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱՏԵՂԻՈՒՄ**



Չորեքշաբթի՝ թականիս մայիսի 13-ի երեկոյեան, Նոր Զուղայի հայ Մ.Մ. «Արարատ» միութեան կենտրոնական վարչութիւնն ընդունեց Հայաստանի հաշմանդամների «Փիւնիկ» միութիւն հասարակական կազմակերպութեան բասկետբոլի հասարակամի անձնակազմին, ովքեր մասնակցել էին մայիսի 11-ից 15-ը Սպահանում կայացած Սպահանի քոյր բաղաքների երկրորդ միջազգային բասկետբոլի մրաշարին: Մուտքի մօս նրանց դիմաւորեցին կենտրոնական վարչութիւնը եւ Մարզական միաւորի վարչակազմը:



Պահը յուզիչ էր եւ տպաւորիչ, երբ մարզիկներն արժանացան նաև միութեան բակում ներկաների շերմ ընդունելութեանը, ովքեր բարեմաղթանքներով ու խմբական երգերով եւ «Կեցցէ Հայաստանը, կեցցէ Արցախը» բացականչութիւններով դիմաւորեցին նրանց:



Մարզիկները նիւրընկալմերի ուղեկցութեամբ այցելեցին մարզասրամ, որտեղ մարզում էին միութեան բասկետբոլիստները: Ապա ընթրիքի սեղանի շուրջ ողջոյնի եւ բարի-գալստեան խօսք ասաց՝ Միութեան կենտրոնական վարչութեան նախագահ պր. Մասիս Մինասեանը եւ ողջունեց Սպահանում կայացած միջազգային բասկետբոլի մրաշարին նրանց մասնակցութիւնն ու ներկայութիւնը միութեան յարկի տակ:




Խօսեց խմբի ղեկավար Յակոբ Աբրահամեանը: Նա շնորահակալութիւն յայն նելով հիւրընկալութեան եւ Նոր Զուղայի հայութեան շերմ վերաբերմունքի համար, իր տպաւորութիւնները կիսեց ներկաների հետ եւ բացատրութիւններ փոխանցեց խմբի մասին: Ապա՝ կենտրոնական վարչութեան բարտուղար Միգանուշ Տէր-Մարտիրոսեանը անդրադարձաւ Նոր Զուղայի ամփոփ պատմականին եւ համայնքում գործող ազգային կառոյցներին եւ միութեան ընդհանուր դրածքին եւ կատարող աշխատանքներին:

Ընթացքում եղան արտայայտութիւններ ու երգեր, իսկ յուզիչ եւ գեղեցիկ պահ եղաւ, երբ միութեան շրջափակում գտնուող մի խումբ երեխաներ մօտեցան նիւրերին եւ իրենց ուրախութիւնն ու անխառն զգացմունքները յայտնեցին՝ համակրանքի գեղեցիկ գրութիւններով, որոնք ամենայն ուրախութեամբ ընդունեցին մարզիկների կողմից: Վերջում հաւաքականի մասնակցութեան խորհրդանշից վրայ ստորագրեցին անձնակազմը եւ որպէս յուշանւէր յանձնեցին կենտրոնական վարչութեանը:

ՓԵՐԻՈՅ ԿՐԹԱՍԻՐԱՅ ԵՒ ՀԱՅ ՈՒԽՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԶՀԱՐՄԱՀԱԼ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆԱՏԵՂԻԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ

Փերիոյ կրթասիրաց միութեան կենտրոնական վարչութեան և Հայ ուսումնասիրաց Զհարմահալ միութեան Նոր Զուղայի մասնաճիւղի վարչութեան դիմումներով եւ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի որոշմամբ, Նոր Զուղայի հայոց ազգային «Կատարինեան» դպրոցի նախկին շենքը՝ որպէս կենտրոնատեղի, տրամադրւեց զոյգ միութիւններին:

Փերիոյ կրթասիրաց միութեան կենտրոնական վարչութեան նախաձեռնութեամբ սոյն կենտրոնատեղի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ չորեքաբթի՝ մայիսի 6-ի երեկոյեան, ներկայութեամբ քահանայից դասի, թեմիս Պատգ. ժողովի, Թեմական ու Կրօնական խորհուրդների ներկայացուցիչների, Փերիոյ կրթասիրաց միութեան եւ սոյն միութեան Շահինշահրի մասնաճիւղի անդամների, Հայ ուսումնասիրաց Զհարմահալ միութեան Նոր Զուղայի մասնաճիւղի անդամների եւ միշարք այլ հրատիրեալների:



Կենտրոնատեղիի շրջափակում Փերիոյ կրթասիրաց միութեան կենտրոնական վարչութեան նախագահ Հայէ Հայրապետեանը ողջունելով ներկաներին՝ շնորհակալական խօսք ուղղեց Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդին՝ շենքը միութեանը տրամադրելու կապակցութեամբ, շենքի նորոգութիւնների իրականացման համար յատուկ շնորհակալութիւն յայտնեց թեմի Կալւածա-տնտեսական մարմնին, իսկ բացման հանդիսութեան կազմակերպման առթիւ շնորհակալական խօսք ուղղեց միութեան անդամներին ու Կանանց միաւորին:



Այնուհետեւ մուտքի դրան ժապաւէնը հատուեց Թեմական խորհրդի ատենապետ Նուլ Մինասեանի եւ քահանայի հայրերի ձեռամբ, որից յետոյ ներկաները մուտք գործեցին սրահ, որտեղ Փերիոյ կրթասիրաց միութեան «Էրեբունի» պարախոսմբ՝ դեկավարութեամբ Ալինա Գրիգորեանի, ազգային պարով դիմաւորեց հիւրերին:



Ծրագրի շարունակութեան մէջ Փերիոյ կրթասիրաց միութեան վարչութեան անդամ Ռիմա Զաքէսեանը հրատիրեց Թեմական խորհրդի ատենապետին արտայայտւելու:



Նուլ Մինասեանը շնորհաւորելով Փերիոյ կրթասիրաց եւ Հայ ուս. Զհարմահալ միութիւնների անդամներին նոր կենտրոնատեղիի կապակցութեամբ, շնորհակալական խօսք ուղղեց թեմի Պատգամաւորական ժողովին, Թեմական ու Կրօնական խորհուրդներին սոյն շենքը զոյգ միութիւններին տրամադրելու ուղղութեամբ ցուցաբերած համագործակցութեան եւ Կալւածա-տնտեսական մարմնին ու սոյն մարմնի գործավար Շահէ Թահմազեանին՝ կարճ ժամանակահատածում շենքը նորոգելու եւ աւելի բարιօք վիճակում միութիւններին տրամադրելու առնութեամբ: Նա իր խօսքի աւարտին իր ուրախութիւնը յայտնեց, առ այն, որ այսուհետ զոյգ միութիւններն առաւել յարմար միջավայրում կը շարունակեն իրենց աշխատանքները եւ նրանց աշխայթ գործունեութեան շնորհիւ կառոյցը առաւել կենսունակ կը դառնայ:

Շարունակութիւնը՝ 34-րդ էջում

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄՐՑՈՅԹԸ ՇԱՀԻՆՇԱՀՐԻՄ



Երկուշաբթի՝ 2015 թ. Մայսի 4-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում, Հայոց Յեղապահնութեան 100-ամեակի Ոգեկոչման Շահինշահրի յանձնախմբի նախաձեռնութեամբ եւ Ուսուցական անձնակազմի համագործակցութեամբ կազմակերպել էր «Գիտելիքների մրցոյթ»՝ համայնքի «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների աշակերտ-ունիների համար, որին ներկայ էին Շահինշահրի Հոգեւոր տեսուչ Տ. Անանիա վրդ. Գունանեանը, Համայնքային Վարչութեան անդամները եւ մի շարք ծնողներ:

Սոյն միջոցառման բացումը կատարեց Վարչութեան անդամ տկն. Մարիտա Քեշիշեանը, որն ողջունելով Յանձնախմբի կազմակերպած միջոցառումը՝ հրավիրեց մասնակից խմբերին մրցակցութեան:

Սոյն մրցոյթին մասնակցում էին 6 խումբ, հետեւեալ մասնակիցներով.

- Վան խումբ՝ Վանա Յակոբ Զաքրիեան

- Արտահան խումբ՝ Արին Թորոսեան, Դերիկ Թահմանեան, Վաչէ Քեշիշեան եւ Արին Միհնասքանեան

- Երզնկա խումբ՝ Արինէ Նազարեան, Զեփիտ Շահիշանեան, Ռիմետա Նազարեան եւ Սերլի Ղարախանեան

- Սասուն խումբ՝ Արմէն Քեշիշեան, Նարեկ Փանոսեան, Արամ Գրիգորեան եւ Արգիշտ Նազարեան

- Կարս խումբ՝ Բիլիր Միհնասեան, Ալիքա Թորոսեան, Վանէ Թահմագեան, Արփա Վարդանեան

- Կարին խումբ՝ Արիս Մուրադեան, Թէոդիկ Մանուկեան, Էնրիկօ Զէնալեան



Իսկ իբրեւ իրաւարար կազմ հանդէս եկան Վարդուիի Պողոսեանը, Մարինա Մանասէրեանը եւ Սեւադա Խսանովեանը:

Վերոյիշեալ խմբերի մասնակիցները ամենայն աշալցութեամբ անցկացրին մրցոյթի երկու փուլը, արժանանալով ներկաների շերմ գնահատանքին:

Մրցոյթի աւարտին, արդիւնքները ամփոփելուց յետոյ, յաղողոյ ճանաչուեց Վան խումբը, իսկ երկրորդ եւ երրորդ տեղերը զբաղեցրին՝ Արտահան եւ Երզնկա խմբերը, որոնք կազմակերպիչ յանձնախմբի կողմից պարգևատրվելու են հետագայ միջոցառումների ընթացքում:



Այնուհետեւ Հոգեւոր Հայր Սուրբն իր հայրական պատգամով եզրափակեց օրուայ միջոցառումը, որն ինչպէս միշտ նախ իր ուրախութիւնն յայտնեց համայնքում նմանատիպ հետաքրքիր եւ աշխոյդ ձեռնարկներ կազմակերպելու համար, ապա շնորհաւորելով բոլոր մասնակիցներին բարձր գնահատեց նաև ծնողներին, որոնք միշտ հոգաւարութեամբ եւ համակ ուշադրութեամբ հետեւում են իրենց զաւակների առաջադիմութեանը եւ խթան են հանդիսանում նրանց՝ նորանոր գիտելիքներ ձեռք բերելու կարեւոր գործում:

ԳԱԱՀԱՏՄԱՆ ԵՐԵԿՈՅ ԾԱՀԻՆԾԱՀՐՈՒՄ

Երկուշաբթի՝ 2015 թւականի մայիսի 11-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում, Մեծ Եղեռնի 100-ամեակի Ոգեկոչման յանձնախմբի նախաձեռնութեամբ կազմակերպւել էր գնահատուման երեկոյ՝ նոյն յանձնախմբի աշխատանքների ծիրում կազմակերպւած «Նկարչութեան ցուցահանդէս»-ի եւ «Գիտելիքների մրցոյթ»-ի մասնակիցների համար: Զեռնարկին ներկայ էին Համայնքի վարչութիւնը, մասնակիցների ծնողներն ու մի շարք հրավիրեալներ:



Երեկոյի բացումը կատարեց վերոնշեալ յանձնախմբի անդամ՝ տկն. Վարդուիի Պօղոսեանը, որը բարի գալուստ մաղթելով ներկաներին՝ խօսքը փոխանցեց յանձնախմբի նախագահ պրն. Արիս Դաւթեանին: Վերջինս ողջունելով ներկաներին՝ բարձր գնահատեց բոլոր մասնակիցներին՝ նրանց ցուցաբերած խանդավառ մասնակցութեան համար եւ շնորհակալութիւն յայտնեց յանձնախմբի հետ համագործակցած բոլոր անձանց:

Գնահատագրերի եւ նւէրների յանձնան համար բեմ հրավիրեցին Համայնքի վարչութեան ներկայացուցիչ՝ պրն. Սարօ Շահմիրզայեանը, Համայնքի վարչութեան եւ յանձնախմբի աշխատանքները համադրող՝ տկն. Մարիտա Քեշիշեանը եւ յանձնախմբի անդամ՝ տկն. Մարինա Մանասերեանը:

Գնահատագրեր ստացան «Նկարչութեան ցուցահանդէսի» եւ «Գիտելիքների մրցոյթի» բոլոր մասնա-

կիցները, իսկ գնահատագրից բացի նւէրներ ստացան նշեալ ցուցահանդէսին մէկից աւելի ստեղծագործութեամբ հանդէս եկած մասնակիցները եւ «Գիտելիքների մրցոյթ»-ին առաջին, երկորրդ եւ երրորդ տեղեր գրադեցնողները:



Զեռնարկի փակման խօսքն արտայայտեց դպրոցի հայերէն բաժնի փոխտեսուչ՝ պրն. Զանիկ Թահմազեանը, որը եւս իր հերթին իր շնորհաւորանքի խօսքն ուղղելով բոլոր մասնակիցներին՝ նրանց մաղթեց առաւել ոյժ, յառաջադիմութիւն եւ նորանոր վերելքներ կեանքի բոլոր ասպարէզներում:



Զեռնարկի աւարտին տեղի ունեցաւ համեստ հիւրամիրութիւն:



ԾՈՒՅԻ ԱՇԱՏԱԳՐՄԱՆ 23-ԱՄԵԱԿԻՆ ՆԻՒՐԱԾ ՁԵՌՆԱՐԿ ԾԱՀԻՆԾԱՀՐՈՒՄ

Զորեքշաբթի՝ 2015 թւականի մայիսի 13-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում, «Որորէն» երիտասարդական միութեան նախաձեռնութեամբ կազմակերպւել էր ձեռնարկ՝ Շուշիի ազատագրուման 23-ամեակին նիւրած:

Զեռնարկին մասնակցել էին համայնքի նոգեւոր տեսաւ հոգշ. Տ. Անանիա Վլդ. Գումանեանը, Հայ Համայնքի վարչութիւնը, նոր Զուղայից եւ համայնքից հրավիրեալներ ու ներկաներ:

Բացման խօսքով հանդէս եկաւ օրիայ հաղորդավար Վահէ Թահմազեանը, ով բարի գալուստ մաղթելով ներկաներին՝ ակնարկեց պատմութեան ընթացքում հայ ժողովրդի արձանագրած հայունասիրական բազմաթիւ դրագներին եւ ամփոփ կերպով ներկայացրեց

թերդաքաղաք Շուշիի պատմականը:



Հաղորդավարը նշելով, որ ծրագիրն ընդգրկելու է 3 բաժին՝ բանախօսութիւն, գեղարևստական ելոյթ եւ ֆիլմի ցուցադրում, բեմ հրավիրեց օրիայ բանախօս՝ «Որութեն» երիտասարդական միութեան ներկայացուցիչ Արմօն Մինասեանին:



Յարգելի բանախօսը եւս իր հերթին ողջունելով ներկաներին, հետեւեալ սոողերով անցաւ իր բանախօսութեան.

«Թէ՛ իրբեւ ազգային-պատագրական պայքարի յանդուզն նախաձեռնութիւն եւ թէ մանաւանդ, իրբեւ ուազմական փայլուն գործողութիւն, Շուշիի պատագրման յաղթական գրո՞ր, որը սկսւեց 8 մայիս 1992-ին, ազգային-քաղաքական իր նշանակութեամբ կարեւորագոյն դարձակէտ խորհրդանշեց հայ ժողովրդի բազմադարեան պատմութեան մէջ։ Աւելի՞ն, Շուշիի ազատագրումով հայ ժողովուրդը ոչ միայն յաղթական հիմքը դրեց Արցախի վերատիրացման պայքարի, այլեւ ուազմա-քաղա-

քականօրէն ապահովեց վերանկախացեալ Հայաստանի հանրապետութեան ազգային անվտանգութիւնը»։

Այսուհետեւ, բանախօսը հակիրճ անդրադարձ ունենալով Շուշիի պատմականին, որպէս պատմական Հայաստանի 15 նահանգներից մէկի՝ Արցախի՝ ներկայիս Լ.Դ. Հանրապետութեան բերդաքաղաքներից մէկը, այն ներկայացրեց որպէս հայկական ինքնութեան եւ ազատ ու անկախ ազգային կամքի խորհրդանշից՝ անառիկ եւ հերոսական, որը դարերի ընթացքում դիմագրաւելով ավացեղ ուժերի յարձակումներին, պահպանեց հայկական իր ազգային դիմագիծը եւ դարձաւ հայ մշակոյթի, դպրութեան եւ հայ քաղաքական մտքի ու ուազմական տաղանդի զարգացման կարեւորագոյն բնօրրաններից մէկը։



Բանախօսութեանը յաջորդեց Շանթ Թահմազեանի, Սեւադա Խսաղովեանի եւ Արութին Հախնազարեանի գեղարևստական ելոյթը՝ ազգային-հայրենասիրական գեղեցիկ երգերով ու ասմունքով, որոնք արժանացան հանդիսատեսի շերմ վերաբերմունքին։

Իսկ ձեռնարկի վերջին բաժնում ցուցադրւեց «Ընդհատուած մանկութիւն» ֆիլմը, որը մեծ հետաքրքրութեամբ դիտեց հանդիսատեսը։

Ծրագրի աւարտին օրիայ հաղորդավարը շնորհակալութիւն յայտնելով բոլորին իրենց ներկայութեան եւ ցուցաբերած ուշադրութեան համար, բեմ հրավիրեց հոգեշնորհ Հայր Սուլբին՝ իր պատգամը փոխանցելու։



Հոգեշնորհ Հայր Սուլբը շնորհաւորելով Շուշիի ազատագրման առիթով կազմակերպած տօնակատարութիւնը իր գոհունակութիւնը յայտնեց գիտակից ու քաջատեղեակ երիտասարդների ներկայութեան համար, ովքեր աշալոջօրէն կազմակերպել էին սուն ծրագիրը։

Նա իր բարեմաղթանքի խօսքն ուղղեց նաև Շերկաներին, ովքեր համախմբւել էին ազգային այդ գեղեցիկ տօնը միասին նշելու համար։ Հոգեշնորի Հայր

Սուլրմ օրինելով կազմակերպիչներին, մասնակիցներին եւ Շերկաներին՝ աղօթեց, որպէսզի բազմապատկեն հայ ժողովրդի յաղթանակ-ները եւ ողջ հայութիւնը միշտ արժանանայ փառաւոր անւան։



ԱՄՊԵՐՁԻ ՀՎԵՇԵՍ ՇԱՀԻՆՇԱՀԻՐԻ «ՆԱՐԵԿ» ՄՈՆԿՊԱՐՏԵԶ-ՆԱԽԱԿՐԹԱՎԱՒՄ



Երկուշաբթի՝ 2015 թականի յունիսի 8-ի երեկոյեան, Շահինշահրի Հայոց Ազգային «Նարեկ» մանկապարտեզ-նախակրթարանի դպրոցի սրահում, տեղի ունեցաւ նոյն դպրոցի սաների ամավերքի հանդէսը։

Ծրագրին ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի Թեմակալ Առաջնորդ Տէր Բարգէն արք. Զարեանը, Շահինշահրի Հոգեւոր Տէսուչ Տէր Անանիա վրդ. Գուճանեանը, Թեմական Խորհրդի եւ Համանքքային Վարչութեան ներկայացուցիչները եւ սաների ծնողներն ու հարազատները։



Ծրագրի բացումը կատարեց դպրոցի տեսչուին օրդ. Կարինէ Մի-

նասքանեանը, որը բարի գալուստ մաղթելով ներկաներին՝ շնորհակալութիւն յայտնեց նրանց, դպրոցի անձնակազմի հրաւերին ընդառաջելու համար։

Նա իր խօսքում նշեց. «2014-2015 ուսումնական տարեշրջանը լաւ յուշերով հասնում է իր աւարտին։ Ցանկանում ենք մեր քայցը սաներին՝ առողջութիւն, յաջողութիւն, վերեկի բազում ուղիներ եւ մեծ յաղթանակներ»։

Այնուհետեւ բեմը տրամադրւեց դպրոցի սաներին՝ իրենց ամավերքի ելոյթը ներկայացնելու համար եւ այսպիսով ժպտադէմ փոքրիկները ներկայացան ուրախ երգ ու տաղով եւ գեղեցիկ արտասանութեամբ։ Ծրագրի գեղարւեստական բաժինն աւարտելուց յնույ դպրոցի տեսչուին իր երախտիքի խօսքն ուղղեց Ազգային իշխանութեանը՝ կրթօջախը միշտ հովանատրելու կապակցութեամբ եւ շնորհակալութիւն յայտնեց Ծնողական խորհրդին, պրնք. Մարտիկ Յովհաննիսին ու Գեղիկ Խաչատրեանին՝ ծեռնարկի երաժշտութիւնն ու նկարահանումը ստանձնելու համար։

Ծրագրի յաջորդ բաժնում տեղի ունեցաւ 2014-2015 ուս. տարեշրջանի վկայականների բաշխումը՝ Սրբազն Հօր ծեռամբ եւ Թեմական խորհրդի ներկայացուցիչ ներկայութեամբ։

Վերջում իր օրինանքի եւ գնահատանքի խօսքը փոխանցեց Գերշ. Սրբազն Հայոք՝ շեշտադրելով հայոց դպրոցի անժխտելի եւ ուրոյն դերը՝ մատաղ սերնդի հայեցի դաստիարակման նիդրական գործում։ Նա իր գնահատանքի խօսքն ուղղեց դպրոցի անձնակազմին, Ծնողական խորհրդին եւ ծնողներին՝ իրենց ստանձնած պարտականութիւնը լաւագոյնս իրագործելու համար եւ նրանց ցանկացաւ ուժ, կորով եւ եռանդ։

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 97-ԱՄԵԱԿԻ
ԱՌԻԹՈՎ ՀԱՆԴԻՍԱԴՈՐ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ՝ ԵԱՀԻՆԾԱՀՐՈՒՄ**



2015 թականի յունիսի 11-ի երեկոյեան, Շահինշահին Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջակակում, հանդիսաւոր կերպով նշվեց Հայաստանի Առաջին Հանրապետութեան 97-ամեակը:



Սկզբում Հայաստանի Հանրապետութեան 97-ամեակի տօնակատարութեան յանձնախմբի անունից, ողջոյնի եւ բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ օրուայ հանդիսավար տկն. Վարդումի Պօղոսեանը՝ ամենայն հայոց բանատեղծ Յովիաննէս Թոումանեանի գեղեցիկ բանաստեղծութեան հետեւեալ հատուածի արտասանութեամբ.

«Ու պիտի գայ հանուր կեանքի արշալոյսը վառ հազած,
Հազար-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,

Կենսաժպիտ իր չողերը պիտի ժպտան առաջին,
Ու պոէտներ, որ չեն պղծել իրենց չուրթերն անէծքով,
Պիտի գովեն քո նոր կեանքը նոր երգերով, նոր խօսքով,

Իմ նոր հայրենիք, Հզօր հայրենիք...»:

Այնուհետև ներկայացրեց տօնախմբութեան ծրագիրը: Հայ յայտարարած ծրագրի նախ տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն՝ նոր Զուղայի Հայ Մ.Ա. «Արարատ» միութեան Շահինշահին մասնաճիւղի Սկաուտական միաւորի միջոցով եւ հնչեցին Իրանի Խալ. Եւ Հայաստանի Հանրապետութիւնների հիմները:

Ապա, համանքի հոգեւոր տեսուչ Տէր Անանիա վրդ. Գումանեանի միջոցով եւ դպրաց դասի մասնակցութեամբ տեղի ունեցաւ Հանրապետական մաղթանք:



Յաջորիդի օրուայ առթիւ բանախօսեց Սպահանի Հայոց Թեմի Կրօնական խորհրդի ատենապետ պր. Վարուժ Մովսիսեանը, որն իր խօսքն սկսեց Պարոյ Սե-

ւակի «Սարդարապատ» ստեղծագործութեան հետեւ և ալ տողով. «Սերունդներ դուք ձեզ ճանաչէք Սարդարապատից»:

Նա գեղեցկօրէն անդրադառնալով Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի երեք հերոսամարտերի պանծալի պատմականին՝ ընդգծեց, որ Սարդարապատը 1918 թականի Մայիսեան երեք ճակատամարտերի խոսցած բանաձեւումն է: Հայ ժողովրդի բազմադարեան պատմութեան մէջ անզուգական խոյանք, որի յաղթանակի գաղտնիքն էին՝ առաջին հերթին ժողովրդի միասնականութիւնը, երկրորդը՝ Ն.Ո.Օ.Տ.Տ. Գերդ 5-րդ կաթողիկոսի որդեգրած անդրդելի կեցւածքը՝ Ս. Էջմիածինն ու հայրենիքը պաշտպանելու գործում, եւ երրորդը հայ զինուրականութեան եւ աշխարհազօրայինների սխրագործութիւնը:

Իր խօսքում յարգելի բանախօսը նշեց յատկապէս նորաստեղծ հանրապետութեան ցալտուն ձեռքբերումները՝ բաղաքական, հասարակական եւ տնտեսական ոլորտներում, որոնք փայլուն առաջընթացներ էին՝ հաշվի առնելով «Յեղապահութիւն» տեսած եւ բազում խոշնդուների ու լուրջ բարդութիւնների առջեւ կանգնած ժողովուրդ լինելու հանգամանքը:



Զենարկի պաշտօնական վերջին բաժնում իր հայրական պատգամը փոխանցեց Հոգշ. Հայր Սուրբը, որը մէշբերում ենք ստորեւ.

«Քիչ առաջ գեղեցիկ, ամփոփ եւ մանաւանդ իմաստալից կերպով լսեցինք սիրելի բանախօսին, եւ ես վստահ եմ որ ամէն տարի ամէն առիթի խօսւում է Մայիս 28-ի սխրագործութեան մասին, Մայիս 28ի մէր յաղթանակի մասին եւ մանաւանդ Մայիս 28-ով ձեռք բերած բարձրունքների մասին: Սիրելի հարազատներ,

չի կարելի չյիշել, որ այսօր մենք բոլորս ապրում ենք, շնչում ենք այն տեսիլքով, այն շնչով, այն հոգիով, որ ունի իւրաքանչիւր հայ՝ ապրելու, շնչելու իւրաքանչիւր հայ հայրենիքով, Մասիսով եւ եռագոյնով: Եւ այս բոլոր ձեռքբերումները սկսւեցին Արամ Մանուկեաններով եւ հայ հերոսամարտերի բոլոր Փիդայիններով:

Եւ այսօր մենք խոնարհում ենք նրանց առաջ եւ յիշում ենք նրանց յիշատակը: Այո, 1918-ի Մայիս 28-ի անկախութիւնը մեր հայ կեանքի եւ պատմութեան մէջ այնքան երկար չտեւեց, սակայն դա մի նոր յոյս էր, մի նոր ուժ էր, մի նոր կորով մանաւանդ 1915-ից վերապարած, ջարդւած, ազատագրւած եւ աքսորւած իւրաքանչիւր հայի համար:

Մայիս 28-ը մեր ազատութեան առաջին խորհրդանիշն էր՝ ցեղասպանութիւնից յետոյ, մեզնից իւրաքանչիւրի համար մի նոր սկիզբ էր՝ նոր տեսիլքով, նոր կեանքով, նոր գաղափարներով: Այն երկար չտեւեց, բայց հայի կամքը, հայի ուժը, հայի նկարագիրը այստեղ կերտւեց, որ Սեպտեմբեր 21-ին կրկին անգամ վերանկախացաւ եւ ունեցաւ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան»:

Հոգշ. Հայր Սուրբը շարունակելով իր խօսքը, Սպահանի Հայոց Թեմի Թեմակալ Առաջնորդ՝ Տ. Բաբեկն Արք. Զարեանի անունից, բարձր գնահատեց Համայնքային Վարչութեանը, Մայիս 28-ի տօնակատարութեան յանձնախմբին, օրայ բանախօսին եւ բոլոր Շերկաներին, ովքեր իրենց մասնակցութեամբ յարգեցին 1918 թականի մայիսի 28-ը կերտողների յիշատակը: Եւ մաղթելով նորանոր յաղթանակներ՝ յոյս յայտնեց, որ մի գեղեցիկ օր՝ Մասիս-Արարատ լեռան դիմաց, բոլոր մեր բունագրաւած հողերի վրայ տօնենք Մայիս 28-ը, բարձրացնենք եռագոյն դրօշը եւ երգենք «Մեր Հայրենիքը»:

Զենարկի պաշտօնական արարողութիւնից յետոյ, Նոր Զուղայից հրամիւած շնորհալի երաժիշտ Արթին Ղարախանեանի երաժշտական ելոյթը աւելի շերմ ու մտերմիկ մթնոլորտ ստեղծեց մասնակիցների համար եւ վայելեցին նրանք ազգային-հայրենասիրական եւ ժողովրդական աշխոյժ ու խանդավառ երգեր:



**Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՄԱՍՆԱՅԻՆ ՂՈՒՄ
ՏՕՆԻԵՑ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ**



Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ եւ Մշակութային միաւորի նախաձեռնութեամբ, յունիսի 14-ի յետմիջօրէի ժամը 5:00-ին, տօնակատարւեց «Երեխաների պաշտպանութեան միջազգային օր»-ը:

Մանկական ուրախ երաժշտութեան հնչինցների ներքոյ, «Ս. Վարդանանց» դպրոցի փոքր սրահում հիւրընկալւեցին Շահինշահրի Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի սաները, ինչպէս նաև «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների առաջինից մինչեւ հինգերորդ դասարանների աշակերտները: Ներկաներին ողջունեց Մշակութային միաւորի անդամ տկն. Մարիա Խուդավերդեանը, ով շնորհատուելով երեխաների տօնը՝ մաղթեց առողջութիւն, ուրախ եւ անհոգ մանկութիւն: Հաղորդավարը նշեց, որ երեխաներին ողջունելու է եկել Շահինշահրի Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի ուսուցչուին տկն. Էմմա Օրդուրեգեանը, ով գրած մանկական 40 բանաստեղծութիւնները տպագրւել է 2012 թականին, «Հայ մանկան տարւայ» առիթով՝ «Մանկական երազ» գրքում: Այնուհետեւ օրւայ առիթով խօսքը փոխանցելու համար հրահրեց սիրելի ուսուցչուին:

Տկն. Էմման նախ շնորհաւորեց երեխաներին տօնի առիթով եւ նշեց. «1950 թականից աշխարհի տարբեր երկրներում նշում են այս գեղեցիկ տօնը, որը մեծերիս յիշեցնում է երեխաների իրաւունքների մասին՝ դպրոց գնալու, սովորելու եւ ապրելու ապահով ընտանիքներում եւ հանգիստ միշավայրում: Ոչ ոք իրաւունք չունի ձեր նկատմամբ ուժ գործադրելու եւ որ դուք պաշտպանութեան եւ առաւել հոգատարութեան կարիք ունեք, եւ մենք մեծերս երբեք չպէտք է մոռանանք, որ այս հողագնդի ապագան, սիրելի փոքրիկներ, ձեր ձեռքերում է»:



Տօնի առիթով պատրաստւել էր գեղեցիկ պատկերով կարկանդակ, որի մօտ համախմբւած լուսանկարւեցին: Երեկոն հաճելի եւ անմոռանալի դարձնելու համար անցկացւեցին հետաքրքիր մրցութիւններ եւ ուրախ խաղեր: Յաղթողներին սպասում էր անակնկալ նէրներ:

Մշակութային միաւորի անդամները երեխաների համար պատրաստել էին հիւրասիրութիւն: Խնջոյքի ընթացքում տիրում էր շերմ մթնոլորտ: Երեխաներն ուրախ ու անկաշկանդ պարում էին: Վերջում մասնաճիւղի վարչութեան կողմի ց երեխաներին նւիրւեց մանկական 4 ֆիլմեր պարունակող մէկական DVD:

ՀԱՅՈՅ ԺԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆԻՒՐԻԱՇԻԳՈՅԱՌՈՒՄՆԵՐ՝ ՓԵՐԻՈՅ ԳԱՒԱՐԻ ԲՈԼՈՐԱՆ ԳԻՒՂՈՒ

Սպահանի հայոց թեմի Պատգամաւրական ժողովի Փերիոյ շրջանի պատգամաւր Զանի Նազարեանից տեղեկացանք, որ սոյն շրջանի Բոլորան հայաբնակ գիւղի բնակչութիւնը մի շարք միջոցառումների կազմակերպմամբ ոգեկոչել է Հայոց ցեղասպանութեան 100-ամեակը:



Բոլորան գիւղը գտնուում է Սպահան նահանգի արեւմտեան մասում, Սպահան քաղաքից 160 կ.մ. հեռաւրութեամբ, որի բնակչութիւնն ամբողջութեամբ հայեր են: Նրանք հայատարիմ մնալով իրենց եկեղեցուն, հայկական արժեքներին ու մշակոյթին, նաև արդար աշխատանքի շնորհիւ, երկար տարիներ իրենց ծննդավայրը շնորհիւ կանգուն են պահել, միաժամանակ զանք չեն խնայել Հայ դատի աշխատանքներին սատարելու ուղղութեամբ:

Քանի որ 2015 թականը Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի լրանալու պատճառով անկիւնադարձային տարի է համարում հայ ժողովրդի համար, հայկական պահանջատիրական պայքարին միանալու նպատակով, «Ֆիշում եմ ու պահանջում» նշանաբանի ներքոյ, Բոլորան գիւղի հայութիւնը նոյնպէս իր արդար ձայնը լսելի դարձրեց

Եւ մի շարք միջոցառումների կազմակերպմամբ ոգեկոչեց առիթն ու հատուցում պահանջեց ցեղասպան հանցագործից:

Գիւղի բնակիչներն Ապրիլի 24-ին նախորդող օրերի ընթացքում պատերին էին փակցրել պահանջատիրական որմագրեր եւ պարսիկ հայրենակալիցների միջև բաժանել էին պարսկերէն լեզուվ հատուցում պահանջող կոչեր: Ապրիլ 23-ի երեկոյեան, գիւղի Ս. Ղուկաս եկեղեցում, կազմակերպւել էր մոմավառութիւն՝ ի յիշատակ Մեծ եղենի բիւրաւոր նահատակների, որին մասնակցել էին գիւղի պահանջատէր ժողովուրդը:



Խոկ Ապրիլի 24-ի առաւտուեան, Մեծ եղենի բիւրաւոր նահատակների յիշատակը ոգեկոչելու եւ բողոքի ցոյց կատարելու նպատակով, գիւղի բնակիչները համախմբւել էին 1915 թականին Իրան գաղթած եւ Բոլորան գիւղում իր մահկանացուն կնքած Կէնեազ Ալեքսանդրեան անունով մի հայորդու շիրիմի մօտ, ուր խունկ է ծխւել եւ աղօթք բարձրացւել առ բարձրեալն Աստիած:



Շարունակութիւն՝ 26-րդ էջից

ՓԵՐԻՈՅ ԿՐԹԱՄԻՐԱՑ ԵՒ ՀԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑ...

Այնուհետեւ համեստ ընդունելութեան ընթացքում շնորհաւորական խօսքով եւ բարեմաղթանքներով հանդէս եկան Փերիոյ կրթասիրաց միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութեան նախագահ Զանի Թահմագեանը, թեմի Կրօնական խորհրդի ատենապետ Արշալոյս Խուդավերդեանը եւ արժն. Տ. Խաչատուր քին. Զարգարեանը: Երեկոն առաւել խանդավառւեց Անասիկ Ցովսէփեանի, Ժաքին Պողոսեանի եւ Արեգա Ցարութիւնեանի ազգային երգերի կատարմամբ եւ ներկաների պարերով:

Երգերին երգեհինի կատարմամբ ընկերակցում էր կիասասարկաւագ Ալբերտ Ղազարեանը: Ազգային պարը ներկայացրին պարախմբի անդամներ՝ Մարալ Ղարիբեանը, Մելանիա Շատուրեանը եւ Ալինէ Գրիգորեանը:

ՆԻՒՐԱՏԻՌԻԹԻՆՆԵՐ

Ն.Զ. Հայոց առաջնական եկեղեցեաց վարդութիւն

Ս. Գէորգ եկեղեցի

- 5,000,000 դիալ. Շահնօքադ Համիդ
- 1,000,000 դիալ. Սքռամ
- 500,000-ական դիալ. Մանէ Բարսեղեան, Համբիկ Աբրահամեան, Շորութէ Մալեթի, Ֆառոխի, Բեշաւառդ, Թաղալայի
- 320,000 դիալ. Բեշաւառդ
- 300,000 դիալ. Մասիմիայէ Ազիզ
- 200,000-ական դիալ. Հայրերդ Օհանեան, Հոհիփիկ Ռուտամեան
- 100,000 դիալ. Հրաչիկ Միրզախսանեան
- 50,000 դիալ. Ալիս Բուդաղեան

Խաչի գոյգելու առթիւ

- 500,000 դիալ. Արմինէ եւ Մելինէ Համբարչեաններ, Անժել

Անդրիաս

- 250,000 դիալ. Ծաղկուշ Խուտավերդեան
- 200,000 դիալ. Աւո Սիմոնեան
- 100,000-ական դիալ. Ժովիա Շատուրեան, Վանանդ Խառնուկեան

Ս. Զատիկի

- 250,000-ական դիալ. Մառիթա Կարապետեան, Էմին եւ Նէլի Թորոսեաններ
- 200,000 դիալ. Միեր եւ Վեհանուշ Խուտաբախշեաններ

Ս. Մինաս եկեղեցի

- 2 հաստ գազի եւ մէկ հաստ սովորական թէլիի՝ 5,000,000 դիալ արժողութեամբ ի իշաւակ Յարութիւն եւ Զարդիկ Յարութիւնների՝ իրենց գաւակների կողմից

Ս. Ստեփանոս եկեղեցի

- ՄԷկ հաստ փոքր գորգ՝ ի իշաւակ Երևանդ եւ Մարթա Սահակեանների՝ իրենց գաւակների կողմից
- ՄԷկ հաստ ջրի եռուցման գործիք. Էմիկ Մելքոնեան՝ Անդրանիկ Մելքոնեանի իշաւակին
- 200,000 դիալ. Հոփիփիկ Ռոստումեան

Ս. Ներսէս եկեղեցի

- Ս. Տիրամօր պատկերով մէկ գորգ. Ալեքս Տէր Յարութիւննեան

Հանգուցեալ Զաւէն Պուկասեանի յիշատակին

- 100,000 դիալ. Արա եւ Հոփիփիկ Սիմոնեաններ

Հանգուցեալ Մելիքսէէ Շահիճանեանի յիշատակին

- 150,000-ական դիալ. Միքայէլ Զոհրաբեան, Էլիկ Զոհրաբեան, Հրազ Մուրադեան
- 70,000 դիալ. Սրբուհի Ալեքսանդրեան

Հանգուցեալ Եղիսաբէթ Դաւթեան- Յարութիւնեանի յիշատակին

- 100,000-ական դիալ. Վարդանուշ Մկրտչեան, Նւարդ Կիրակոսեան, Ծաղկուշ Աղամատեան

Հանգուցեալ Արշալոյ Թէյմուրեանի յիշատակին

- 500,000-ական դիալ. Մարո Կիրակոսեան, Սովետ Կիրակոսեան

Հանգուցեալ Մասիս Մարտիրոս Մակարեանի յիշատակին

- 300,000 դիալ. Մասիս Մինասքանեան
- 250,000 դիալ. Մասիս Պարսամեան

- 200,000-ական դիալ. Ս.Ս. Վանքի «Կոմիտաս» երգչախումբ, Մարիամ Կիրակոսեան, Զաւէն Մուրադեան, Լիդուշ Թէմուրեան, Գարեգին Մարկոսեան, Գրիշ եւ Վարդուհի Քալանթար-Օհանեաններ

- 150,000-ական դիալ. Վազգէն Անդրիասեան, Կայծակ եւ Դիանա Կարապետեաններ

- 100,000-ական դիալ. Սոնիկ Կիրակոսեան, Մանուշ Ղարա-

Հանգուցեալ Նւարդ Մկրտչեանի յիշատակին

- 200,000 դիալ. Եղիս Ներսեսեան
- 100,000 դիալ. Հոփիփիկ Շահիճանեան
- 50,000 դիալ. Արաքս Աւետեան

Հանգուցեալ Թովկաննէս Թովկաննէսփուռի յիշատակին

- 150,000 դիալ. Արսէն Շահրաբեան

Հանգուցեալ Գասպար Թովկէփեանի յիշատակին

- 300,000 դիալ. Նոր Զուղայի Հայուհեանց բարեգործական ընկերութիւն

Հանգուցեալ Խաժունիկ Մինասեանի յիշատակին

- 500,000 դիալ. Մարշիկ Մինասեան
- 150,000 դիալ. Խորեն Մարկոսեան
- 100,000 դիալ. Սութիազ Բարումեան

Հանգուցեալ Հայկ Մահակեանի յիշատակին

- 1,500,000 դիալ. Անդրէ Խայտեան
- 500,000 դիալ. Հերմնէ Մարկոսեան
- 300,000 դիալ. Անգինէ Հայրապետեան
- 200,000-ական դիալ. Անգինէ Խաչատրեան, Արմոնդ Մարկոսեան

Հանգուցեալ Կարապետ Նահապետեանի յիշատակին

- 500,000 դիալ. Գառնիկ եւ Օդեթ Բաղդասարեաններ
- 300,000 դիալ. Նժդէր Ստեփանեան
- 250,000 դիալ. Ս. Ստեփանոս Եկեղեցու լանձնախումբ
- 200,000-ական դիալ. Կարո Ցովսէփեան, Լորիկ Բաղդասարեան
- 150,000 դիալ. Խաչատրուր Զարգարեան

Հանգուցեալ Սոնիկ Մարգսեան- Ջոհրաբեանի յիշատակին

- 1,000,000-ական դիալ. Դիանա Ղազարեան-Խաչիկեան, Ելիզաբէտ Սուրբագեան
- 500,000 դիալ. Ուազմիկ եւ Արաքս Մկրտչեաններ
- 300,000-ական դիալ. Արա Սարգսեան, Նժդէր Ստեփանեան, Վարդգէս Պետրոսեան, Գետիկ եւ Արփինէ Զարգարեաններ

Հանգուցեալ Դավիթ Մուրադեանի յիշատակին

- 250,000 դիալ. Վազրիկ Մարկոսեան
- 200,000-ական դիալ. Փերիոյ կրթասիրաց միութիւն, Հայրիկ եւ Յաւերժիկ Կարապետեաններ, Արթուր Սարգսեան, Հենրիկ Բաբայեան, Անդրէ եւ Թագուշ Խաչատրեաններ
- 160,000 դիալ. Հայկազ Ղազարեան
- 150,000 դիալ. Անդրէ Ղազարեան
- 100,000-ական դիալ. Վարդանուշ Մկրտչեան, Սոնիկ Կիրակոսեան, Համազ Աբրահամեան, Գասպար Մարտիրոսեան, Պերճիկ Քամարգարեան

Հանգուցեալ Արտաշ Մարկոսեանի յիշատակին

- 400,000 դիալ. Էդիմ եւ Սեղա Շահիշանեաններ
- 300,000 դիալ. Հրազ եւ Սաթօ Սիմոնեաններ
- 200,000-ական դիալ. Սարո Այւազեան, Ալբերթ Թահմագեան
- 150,000 դիալ. Մասիս Քեշիշեան
- 100,000-ական դիալ. Վարդանուշ Մկրտչեան, Սոնիկ Կիրակոսեան, Համազ Աբրահամեան, Գասպար Մարտիրոսեան, Պերճիկ Քամարգարեան

Հանգուցեալ Մարտ Մարկոսեանի յիշատակին

- 200,000 դիալ. Ս. Ս. Վանքի «Տաթեւ» երգչախումբ
- 100,000-ական դիալ. Երևանդ Խաչիկեան, Ռազմիկ Մարկոսեան, Աղամիկ Մարկոսեան, Խաչիկեան, Ռազմունիկ եւ Մարիամ Ցովսէփեաններ, Հայկուշ Յակոբեան, Ռութեն եւ Մարինէ Խուտաբեաններ

Հանգուցեալ Արշամ Խուղավերդեանի յիշատակին

- 500,000-ական դիալ. Արշալոյս Խուղավերդեան, Խորէն եւ Անահիտ Մինասեաններ, Համբարձումեան ընտանիք, Սերոնդ եւ

Մարո Ոսկանեաններ, Զամիկ Ղազարեան

- 200,000-ական ոփալ. Ցակոր Մարկոսեան, Ծաղկուշ Խուդավերդեան, Ռութեն և Մարինէ Խուդավերդեաններ, Վազգէն Խուդավերդեան, Ժորժիկ Խուդավերդեան

- 150,000 ոփալ. Անուշաւան Դարբանեան

- 100,000-ական ոփալ. Մարո Բաղոսեան, Երևանդ Խաչիկեան, Մագի Յարութիւննեան, Գալատան Փանոսեան, Սիլվարդ Թորոսեան, Ծաղկուշ Աբելեան

Հանգուցեալ Վարդան Աշոտեանի 40-օրեակի առթիւ

- 500,000 ոփալ. Արթին Դաւթեան

Հանգուցեալ Լեւոն Սարեանի յիշատակին

- 300,000 ոփալ. Զամիկ Ղազարեան

- 100,000-ական ոփալ. Վարդանուշ Ցովսէփեան, Մուշեղ Ղարենեան

Հանգուցեալ Հայրիկ (Աւագ) Կարապետեանի յիշատակին

- 1,000,000 ոփալ. Նոր Զուլայի Հայուհեաց բարեգործական ընկերութիւն

- 500,000-ական ոփալ. Հայ ուս. Զիարմահալ միութիւն, Աղասի Դաւթեան

- 300,000-ական ոփալ. Տիգրանուի Ղեւեան, Վանէ Թորոսեան, Գառնիկ Բաղդասարեան

- 250,000 ոփալ. Արա և Հոփիսիկ Սիմոնեաններ

- 200,000-ական ոփալ. Ֆլոր Թորոսեան, Միքայէլ Զոհրաբեան, Վաչէ Շահիչանեան

- 150,000 ոփալ. Ցովիկ Վարդանեան

- 100,000-ական ոփալ. Աւուկ և Սանդրա Խուդաբախշեաններ, Նուրդ Վարդանեան

Հանգուցեալ Ասքանազ Յովհաննիսեանի յիշատակին

- 1,000,000 ոփալ. Ռազմիկ և Արաքս Մկրտչեաններ

- 600,000 ոփալ. Գիլճազ, Ժենիկ և Ժանեթ Պողոսեաններ

- 500,000-ական ոփալ. Ժորժ և Թեման Հայրապետեաններ, Գարեգին և Հիլդա Փանոսեաններ

- 400,000 ոփալ. Շողիկ և Ցովիկ Վարդանեաններ

- 300,000 ոփալ. Մասիս և Վանուի Ղազարեաններ

- 250,000 ոփալ. Մարտիկ և Կայեթ Ղիասեաններ

- 200,000-ական ոփալ. Սարդար Ղազարեան, Վահան Թահմագեան, Դիանա Ղարախանեան, Մերուպ Թահմագեան, Արքահամ և Վոլգա Մերուպեաններ

- 100,000-ական ոփալ. Հայկազ Պետրոսեան, Խոլաբեր Մանուկեան, Յարութ Բաղդասարեան, Վարդուշ Ամիրխանեան, Աւուկ և Սանդրա Խուդաբախշեաններ

- 50,000 ոփալ. Պերճիկ Քամարգարեան

Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին
առնչութ լուրերն ու թիվակցութիւնները պատրաստում է Ազգային առաջնորդարանի Հանրային կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններին վերաբերող լուրերը՝ «Ամիք»-ի թղթակիցները, «Արարատ» Միտթեան առնչուղ լուրերը՝ օրդ. Երանուշ Թահմագեանը, Շահինշահրի հայ համայնքին վերաբերող տեղեկութիւնները՝ տկն. Վիոլեթ Յարութիւննեանը, իսկ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Շահինշահրի մասնաճիւղի հաղորդագրութիւնները՝ տկն. Արդա Մուրադեանը:

Որոշ ծրագրերի լուսանկարները տրամադրում է պրն. Գեւիկ Խաչատրեանը:

Հանգուցեալ էղնա Տէր Գրիգորեանի յիշատակին

- 300,000 ոփալ. Մելքոնեան ընտանիք

- 200,000-ական ոփալ. Ժենիա Տէր Գրիգորեան, Անուշիկ Ցովհաննիսեան

Հանգուցեալ Ռոզա Թորոսեան-Դաւթեանի յիշատակին

- 1,000,000 ոփալ. Շամինշահրի Հայ համայնքի վարչութիւն

- 300,000 ոփալ. Արմենի Մարկոսեան

- 200,000 ոփալ. Էզարէ Դաւթեան

- 150,000 ոփալ. Եղիշ Թատէոսեան

Սպահանի հայոց թեմի Կորական խորհուրդ

- 10,000,000 ոփալ. Օնիկ Դաւթեան իր կնոջ՝ Գայիանէ Թորոսեան-Դաւթեանի յիշատակին՝ նկրած կարիքատր աշակերտներին

- 5,000,000 ոփալ. Կարո Դաւթեան՝ իր մօր՝ Գայիանէ Թորոսեան-Դաւթեանի յիշատակին՝ նկրած կարիքատր աշակերտներին

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութիւն

Հայոց Եղեասպանութեան 100-ամեակին նւիրւած ասմոնքի մրցոյթ-փառատօն

- 3,000,000 ոփալ. Ն.Զ. Հայ կանանց գթութեան միութիւն

- 500,000-ական ոփալ. Ն.Զ. Հայոց ազգային «Քանանեան» դպրոց, Վանանդ Խաղովշեան, Նարէ Վարդանեան

- 300,000-ական ոփալ. Փերիո կրթ. միութեան կենտրոնական վարչութիւն, Հայ ուս. Զիարմահալ միութեան նոր Զուլայի մասնանիւղ

- 200,000-ական ոփալ. Ն.Զ. Հայոց ազգային «Արմէն» կրթահանալիք, Ակինա Ալեքսանդրեան, Միրօ Ղազարեան, Մենուա Ցովսէփեան

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինդահրի Մասնաշիւղ

Մանուկների համաշխարհային օրւայ առթիւ

- 500,000 ոփալ. Սարա և Սիրակ Շահմիրզայէններ

- 150,000 ոփալ. Քրիստ Արթուրնեան

- 100,000 ոփալ. Նարէ Քեշիշեան

- 50,000-ական ոփալ. Արդենա Շահրազեան, Արութին Թորոսեան, Փիւնիկ Թորոսեան, Գամեր Թահմագեան, Ժիլբերթ Թահմագեան

Հայ Դաշ Ն.Զ. յանձնախումբ

- 10,000,000 ոփալ. Ալֆրեդ և Վարուժան Աղանեաններ՝ իրենց մօր՝ Արմենի Գողգադ-Աղանեանի մահիան առթիւ հոգենացի փոխարէն

ՄԵՐ ՀԱՍՏԵՒ

Խլիֆե گրի արանե Ջլֆայ Ճշգանձ

և Ջնօվ Իրան

Ճնծօվ Պտի 81735-115

Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran

WWW.Norjughha.ir

WWW.Vank.ir

E-mail: Sourbv@yahoo.com

Tel: +98-31-36243471-2

Fax: +98-31-36270999



**1915 ՀԱՅՈՑ ԶԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ
100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ**

